Ազգ

AZG
armenian newspaper

Հոկտեմբեր 16
1992
Ուրբաթ

օրաթերթ
Բ տարի, թիւ 110 (202)
գինը՝ 2 ռ.

Երեւան 375010
Հանրապետութեան 47

դասիչ 69149

հեռ. 581841, ֆաքս 562941, տելեքս 243266 CPRI SU

Լաչինում մառախուղ է

Ադրբեջանցիները թուլացնում են ակտիվությունը

Վերջին օրերի ընթացքում ադրբեջանական բանակի կազմավորումները նկատելիորեն թուլացրել են իրենց ակտիվությունը Լաչինի մարդասիրական միջանցքի մատույցներում՝ բավարարվելով միայն հարավից միջանցքի անվտանգությունն ապահովող հայկական ուժերի պաշտպանական դիրքերի հրետակոծություններով: Ինչպես հայտնում է «Սնարֆ» գործակալությունը, ռազմական մասնագետները դա բացատրում են վերջին օրերին այդ շրջանի վրա իջած մառախուղով: Միաժամանակ ԼՂՀ ինքնապաշտպանության ուժերի շտաբից տեղեկացնում են, որ միջանցքից հյուսիս Ղոչազ գյուղի մերձակայքում շարունակվում են նկատվել ադրբեջանական բանակի մարտական տեխնիկայի եւ կենդանի ուժի կուտակումներ: Գորիս-Լաչին-Ստեփանակերտ ճանապարհը գործում է անխափան:

■

Հոկտեմբերի 15-ին Թուրքիայից Հայաստան հացահատիկով բեռնված ոչ մի վագոն չի ժամանել

Ինչպես «Նոյյան տապան» գործակալության թղթակցին հայտնեց Հայաստանի երկաթգծերի գլխավոր վարչության պետի տեղակալ Խաչատուր Ավետիսյանը, Ադրբեջանը ոչ մի քայլ չի արել Աղստաֆա-Իջեւան, Մինջեւան-Մեղրի-Նախիջեւան-Երեւան, Զանգելան-Ղազախ երկաթգծերն աղաբջատակելու ուղղությամբ:

Այս երկաթգծերի տեղամասերի վերականգնման ժամկետների մասին խոսելով, Ավետիսյանը հայտնեց, թե հայկական կողմն արդեն ավարտել է վերանորոգման աշխատանքները Մեղրու հատվածում, իսկ Իջեւան-Աղստաֆա տեղամասի վերանորոգման աշխատանքները դադարեցվել են 3 օր շարունակվող գնդակոծությունների պատճառով: «Նոյյան տապան»ի թղթակցի այն հարցին, թե քանի՞ վագոն հացահատիկ է Թուրքիայից արդեն ժամանել Հայաստան, Խաչատուր Ավետիսյանը հայտարարեց, որ չնայած Հայաստանը փաստորեն ավարտել է բեռների ընդունման բոլոր նախապատրաստական աշխատանքները, հոկտեմբերի 15-ի ընթացքում դեռեւս ոչ մի վագոն հացահատիկ չի ժամանել: ■

Ղարաբաղում առանց էական փոփոխությունների

Ինչպես հաղորդում է «Սնարֆ» գործակալությունը, Լեռնային Ղարաբաղում անցած երկու օրերի ընթացքում էական փոփոխություններ չեն եղել: Փոփոխական հաջողություններով դիրքային մարտեր են ընթացել Մարտակերտի շրջանում, որտեղ շարունակվել է հայկական բնակավայրերի հրետակոծությունը:

«Նոյյան տապան» գործակալությունը տեղեկացնում է, որ ԼՂՀ կառավարությունում Մարտակերտի շրջանի լուծարումը դիտում են որպես մարդու իրավունքների կողմից խախտում եւ նոր քայլ հակամարտության խորացման ուղղությամբ:

Ինչպես Ստեփանակերտից հաղորդում է մեր թղթակից Վահրամ Աղաջանյանը, ԼՂՀ ինքնապաշտպանության ուժերի շտաբի տեղեկությունների համաձայն, հոկտեմբերի լույս 14-ի գիշերը հայկական կազմավորումները ետ են մղել ադրբեջանական բանակի գրոհները Մարտակերտի շրջանի Արխավենդ եւ Ղազանչի գյուղերի ուղղությամբ: Երկու կողմերից էլ կան կորուստներ: Երեկ եւ նախորդ օրը էական փոփոխություններ չեն եղել:

Նույն աղբյուրների համաձայն, հոկտեմբերի 14-ին հայկական կազմավորումները կրկին գրավել են Մարտունու շրջանի սահմանագլխին գտնվող եւ մարտավարական կարեւոր նշանակություն ունեցող Ուրյան լեռը, որն ադրբեջանցիները գրավել էին մի քանի օր առաջ: Միաժամանակ, «Սնարֆ» գործակալությունը տեղեկացնում է, որ Մարտունու շրջանի սահմանների երկայնքով նկատվում են ադրբեջանական բանակի մարտական տեխնիկայի եւ կենդանի ուժի մեծ կուտակումներ:

Մինչդեռ, ինչպես հայտնում է Ադրբեջանի պաշտպանության նախարարությունը, ադրբեջանական բանակը Մարտունու շրջանի Արդալ եւ Գյուլապլի գյուղերի մոտ իր ոչնչացրել է հայկական ուժերի երկու տանկ եւ երեք հեծեւակի մարտական մեքենա: ■

Ամերիկահայ հանրապետականները Սոիտակ տանը ադրբեջանական ագրեսիայի դեմ

Ամերիկայի հայկական համագումարի Վաշինգտոնի գրասենյակից տեղեկացնում են, թե Միացյալ Նահանգների հայկական տարբեր գաղութներից հանրապետական կուսակցության անդամ մի շարք հայտնի դեմքեր անցյալ հինգշաբթի օրը մայրաքաղաք Վաշինգտոն են ժամանել Սոիտակ տան բարձրաստիճան պաշտոնյաներին իրենց դժգոհությունը հայտնելու Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի դեմ ուղղված ադրբեջանական վարած ագրեսիվ քաղաքականության հանդեպ նախագահ Բուշի վարչության ցուցաբերած մեղմ քաղաքականության առթիվ:

Ամերիկահայ ներկայացուցիչներին ընդունել են նախագահի ավագ խորհրդականներից Ջեկ Մարեսկան, որը Միացյալ Նահանգների դեսպանն է ԵԱՀԽ-ում, Նիկոլաս Բրոնզը, որ ռուսաստանյան եւ հվրասիական գործերի տնօրենն է ազգային անվտանգության խորհրդում, եւ Կլեյտոն Ֆոնգը՝ նախագահի հանրային կապի գծով օգնականի տեղակալը: Դեսպան Մարեսկան ներկայացրել է ԵԱՀԽ-ի բանակցությունների ներկայիս վիճակն ու լուծման տարբերակները, ներառյալ Ադրբեջանի չկամությունը, միանալու առանց նախապայմանի հրադադարի առաջարկին:

Հայկական պատվիրակությունն իր հերթին ներկայացրել է ամերիկահայ քվեարկողների հուսախաբությունը Բուշի վարչակազմի հանդեպ, Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի կործանիչ շրջափակումների նկատմամբ վերջինիս կողմից ճնշում չգործադրելու առիթով:

Հայկական պատվիրակության մաս են կազմել դոկտ. Հենրի Ասարճյանը, Բերի Զորքյանը, Հրայր Հովնանյանը, Հակոբ Շիրվանյանը, Ռոս Վարդյանը, Բոբ Սիմոնյանը, Էլսի Վարդանյանը, Նազարեթ Գալուստյանը, Էդուարդ Մելիքյանը, Սեր Մոմճյանը, Վիգեն Սոնենց-Փափազյանը, Կարո Արմենյանը եւ Կիմ Հեքիմյանը: ■

Ելցինը հանդիպեց Կիպրոսի նախագահի հետ

Տնտեսական համագործակցության սկզբունքների մասին հուշագրի ստորագրմամբ հինգշաբթի օրն ավարտվեցին Ռուսաստանի եւ Կիպրոսի նախագահներ Բորիս Ելցինի եւ Գեորգիու Վասիլիուի բանակցությունները: Ենթադրվում է, որ կողմերի միջեւ կդպահովանվի առավել բարենպաստության կարգավիճակը, որն առաջին անգամ գրանցվել է 1976 թվականին ԽՍՀՄ-ի եւ Կիպրոսի համաձայնությամբ:

Ելույթ ունենալով լրագրողների առաջ, Բորիս Ելցինը հայտնեց, թե զրույցի ընթացքում քննարկվեցին Կիպրոսի կողմից Ռուսաստանին 55 միլիոն դոլլարի վարկ հատկացնելու, ինչպես նաեւ հեռուստատեսության բնագավառում համագործակցության մասին հարցեր: Վերջինը ենթադրում է Կիպրոսի տարածքների օգտագործման հնարավորությունը Ռուսաստանի հեռուստատեսային կայի աղահովման համար:

Ռուսական ղեկավարությունը արտահայտելով իր «կայուն դիրքը» Կիպրոսի հիմնահարցի վերաբերյալ, պատրաստակամություն հայտնեց *«ազդել ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի վրա Կիպրոսի հունական եւ թուրքական համայնքների միջեւ ծգծգված վեճը լուծելու համար»*: Ելցինի խոսքերով, Վասիլիուն *«շատ ճկուն մոտեցում է ցույց տալիս այդ հարցի լուծմանը»*: ■

Կուտակումներ Վարդենիսի եւ Տաուշի շրջանների ուղղությամբ

Նախորդ գիշեր եւ երեկ իրադրությունը Հայաստանի սահմանամերձ շրջաններում շարունակում էր մնալ լարված: Ադրբեջանի տարածքից շարունակում էին հրետակոծվել սահմանամերձ բնակավայրերը: «Սնարֆ» գործակալությունը, վկայակոչելով Հայաստանի պաշտպանության նախարարությանը, հաղորդում է, որ գնդակոծվել են Վարդենիսի շրջանի Սոդք ավանը, Արարատի շրջանի Սեւակավան եւ Եղեգնաձորի շրջանի Խաչիկ գյուղերը: Սոդք ավանի հրետակոծության ժամանակ օգտագործվել են նաեւ հաուբիցներ եւ մարտական տեխնիկա: Ըստ նախնական տվյալների, հայկական կողմից տուժածներ չկան:

«Նոյյան տապան» գործակալությունը հաղորդում է, որ հոկտեմբերի 14-ի երեկոյան եւ նախորդ գիշեր տանկերից եւ հրետանուց հրետակոծվել են Տաուշի շրջանի Մովսես, Պառավաքար եւ Ներքին Կարմիրաղբյուր գյուղերը: Մովսես գյուղի դիմաց, Կարադաշ լեռան լանջերին նկատվում են ադրբեջանական բանակի մարտական տեխնիկայի կուտակումներ: Կուտակումներ են նկատվում նաեւ Վարդենիսի շրջանի սահմանից 5-6 կմ հեռու՝ Քելբաջարի շրջանի Զառիթեղ գյուղի մերձակայքում: Ըստ ունեցած տվյալների, ադրբեջանական բանակն այստեղ կենտրոնացրել է մինչեւ 20 միավոր զրահատեխնիկա:

Միաժամանակ, Ադրբեջանի պաշտպանության նախարարությունը հայտնում է, թե իբր Հայաստանի տարածքից հրետակոծել են Ադրբեջանի Ղազախի, Աղստաֆայի եւ Գեսարեկի շրջանների գյուղերը, իսկ Գորիսի շրջանի Խնձորեսկ-Ջիջիմլի հատվածում խախտել սահմանը եւ գրոհել Լաչինի շրջանի Ղուշչիլար եւ Ասաղի-Փարաջան գյուղերի վրա: ■

Հուսեյնին չի գլխավորի Լիբանանյան խորհրդարանը

Իրարահաջորդ 3 շրջան Լիբանանի խորհրդարանի նախագահ Հուսեյն Հուսեյնին երեկ հայտարարեց, թե առաջիկա ընտրություններին իր թեկնածությունը չի առաջադրի նախագահական պաշտոնի համար: Այդպիսով, խորհրդարանի նախագահության միանձնյա թեկնածու է մնում նույնպես շիա համայնքից սիրիամետ «Ամալ» (Հույս) շարժման ղեկավար Նեբիհ Բըրրին: Լիբանանյան սահմանադրությամբ խորհրդարանի նախագահության պաշտոնը վերապահված է միայն շիա համայնքին, մինչ հանրապետության նախագահինը՝ քրիստոնյա մարոնիթ, իսկ վարչապետինը՝ իսլամ սունների համայնքների ներկայացուցիչներին: ■

Երկրաշարժի զոհերի թիվն ավելանում է

Հեսգիեսե ավելանում է Կաիրեի երկրաշարժի զոհերի թիվը: Երեկվա պաշտոնական տվյալներով միայն սպանվածների թիվն արդեն անցնում է 650-ը: Համեմատաբար թեթեւ երկրաշարժից այսքան մեծ կորուստների պատճառ է նկատվում Եգիպտոսի մայրաքաղաքի խիտ բնակեցված լինելը եւ աղտոտիչի շինարարությունները շենքերի վերին հարկերում: ■

Ռումբ Թեհրանում

Երեկ Թեհրանի կենտրոնում պայթած ռումբի հետեւանքով սպանվեցին 3 եւ վիրավորվեցին շուրջ 10 հոգի: Ըստ ոստիկանության, սպանվածների մեջ է նաեւ ռումբը հանգուցյալ Այաթոլլահ Իմամ Խոմեյնիի հուշադամբարանի մոտ տեղադրած անձը, որի ինքնության մասին որեւէ տեղեկություն չտրվեց: Վերջին շրջանում ժամացույցավոր բազմաթիվ ռումբեր են պայթել Իրանի մայրաքաղաքի կենտրոնում: Այս կողմից, Իրանի ոստիկանությունը երեկ հայտարարեց, թե շուրջ 900 կգ հերոին է գտնվել Թուրքիայից ժամանած ավտոբուսի մեջ: ■

22 միլիարդ դոլլար օգնություն

Ռուսաստանի կառավարության գլխավոր խորհրդականներից մեկի կարծիքով, ներկայիս գերարժեզրկման սեմին գտնվող երկիրը 1993-ին պետք ունի 22 միլիարդ դոլլարի արտաքին օգնության տնտեսական ամբողջական կործանումից փրկվելու համար: ■

Գորբաչովն այսօր մեկնում է ԳՖՀ

Նախկին ԽՍՀՄ նախագահն ուրբաթ օրը, Մոսկվայի ժամանակով ժամը 15:15-ին «Լուֆթհանզա» ավիաընկերության 3227 ուղերթով կմեկնի Գերմանիա: Այնտեղ Գորբաչովը կմասնակցի քաղաքական հայտնի եւ հասարակական հայտնի գործիչ Վիլլի Բրանդտի հուղարկավորության արարողությանը: ■

Թուրքմենիա-Հայաստան պայմանագիր

Երեկ ՀՀ պատվիրակությունը վարչապետ Խոսրով Հարությունյանի գլխավորությամբ ժամանեց Աշխաբադ: Թուրքմենստանի վարչապետի եւ կառավարության անդամների հետ մեկօրյա բանակցությունների ընթացքում քննարկվեցին երկու երկրների միջեւ 1993 թ. առեւտրատնտեսական համագործակցության հարցեր եւ ստորագրվեց պայմանագիր: ■

digitised by A.R.A.R.@

ՀՀ նախագահը ներկայացրեց սահմանադրության նախագիծը

Երեկ ՀՀ սահմանադրական հանձնաժողովի նիստում հանրապետության նախագահ Լ. Տեր-Պետրոսյանը ներկաներին բաժանեց Հայաստանի սահմանադրության նախագիծը: Մեզ միայն հայտնի դարձավ, որ նախագծի հեղինակներն են արդարադատության նախարարությունն ու ԳԽ անկախ պետականության վերականգնման եւ ազգային հաղթականության հանձնաժողովը: Կարճ ընդարկմանը ներկա են եղել փոխնախագահ Գագիկ Հարությունյանը, ԳԽ պատգամավորներ Արշակ Սադոյանը, Շավարշ Քոչարյանը, Գրիգոր Ավագյանը, Վարդան Ղուկասյանը եւ ուրիշներ: Հանձնաժողովի անդամները որոշել են նախագահի ծանոթացումից հետո մեկ շաբաթ անց կրկին հավաքվել: ■

Ծանոթություն Ռուբեն Շուգարյանի եւ արտասահմանյան լրագրողների միջեւ

Հոկտեմբերի 13-ին Մոսկվայում Հայաստանի Հանրապետության մշակական ներկայացուցչությունում հրավիրված ծանոթացում-երեկույթը նպատակ ուներ սերտ կապեր հաստատել Հայաստանի Հանրապետության նախագահի մամուլի քարտուղար Ռուբեն Շուգարյանի եւ Մոսկվայում հավատարմագրված արտասահմանյան լրագրողների միջեւ: Երեկոյին մասնակցում էին Միացյալ Նահանգների եւ Եվրոպայի 41 լրագրողներ, որոնք ներկայացնում էին այնպիսի հանրաճանաչ պարբերականներ եւ գործակալություններ, ինչպիսիք են «Աստիճյբրդ պրես», «Ռոյթըր», «Յունայթդ պրես», «Նյուզուիք» «Չիկագո Թրիբյուն», «Ուոլ սթրիթ ջըրնըլ», «Յու Էս Նյուզ ընդ Ուորլդ ռիփորթ», «Ամերիկայի ձայն» եւ այլն:

Հանդիպումը նախաձեռնել էր ՀԲԸՄ Վաշինգտոնի լրատվական գրասենյակի տնօրեն Դեյվիդ Զենյանը: ■

Դավիթ Վարդանյան. «Մեյջըրն արտահայտեց Մեծ Բրիտանիայի ավանդական դիրքորոշումը»

Մեծ Բրիտանիայի վարչապետ Ջոն Մեյջըրն արտահայտել է իր երկրի ավանդական ադրբեջանամետ դիրքորոշումը, «Սնարֆ»ի թղթակցին հայտարարեց Հայաստանի ԳԽ արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովի նախագահ Դավիթ Վարդանյանը: Մեկնաբանելով Մեյջըրի այն հայտարարությունը, թե Լեռնային Ղարաբաղն Ադրբեջանի անբաժանելի մասն է, Վարդանյանը նշեց, որ այդ դիրքորոշումը նոր չէ, այն արտահայտվել է նաեւ բրիտանական նախկին կառավարության կողմից: Նույնիսկ Հայաստանի ճանաչման ժամանակ Մեծ Բրիտանիան միակ երկիրն էր, որն արեց այն արտահայտությունը, թե ճանաչում է Հայաստանն առանց Լեռնային Ղարաբաղի:

Խոսելով անգլիական կառավարության այդպիսի մոտեցման դրդապատճառների մասին, Դավիթ Վարդանյանը նշեց, թե այստեղ մեծ դեր են խաղում տնտեսական շահերը, առաջին հերթին՝ նավթային ընկերությունների:

Սակայն նա շեշտեց, թե ոչ մի հայտարարություն, ում կողմից էլ այն արված լինի, ոչ մի լուրջ դեր չի կարող խաղալ ղարաբաղյան հիմնահարցի լուծման ճանապարհին: Ամեն ինչ որոշում է ուժերի իրական հարաբերակցությունը, հայտարարեց Դ. Վարդանյանը: ■

Հրաժարական հօգուտ Նախագահի

Ռուսաստանի արտգործնախարարի առաջին տեղակալ Թեոդոր Շելով-Կովեդյաեւը վաղը՝ հոկտեմբերի 17-ին հրաժարական է տալիս

«Պարոնայք, ես այս մամուլի ասուլիսը կազմակերպել եմ, որպեսզի ձեզ տեղեկացնեմ իմ հրաժարականի մասին, հայտարարեց Շելով-Կովեդյաեւը ՌԴ արտգործնախարարության մամուլի կենտրոնում: *Ես այս քայլին եմ դիմում նախագահ Ելցինի հետ ունեցած խիստ բարյացակամ զրույցից հետո»:*

Այլ պարագայում հայերիս ուշադրությունը հազիվ թե գրավեր նման հրաժարականը: Բայց Շելով-Կովեդյաեւը մեզ համար օտար մարդ չէ. նա ակտիվորեն մասնակցում է հայ համայնքի միջոցառումներին, խորհրդարանում պատգամավոր է Լեռնային Ղարաբաղի շահերը: Նա առանձնապես չբացահայտեց իր հրաժարականի բուն պատճառները, ասելով, թե դա կանի միայն այն ժամանակ, երբ մերձավոր արտասահմանի նկատմամբ Ռուսաստանի քաղաքականության մեջ, որի ձեւավորմանն ինքն ամենաակտիվ մասնակցությունն է ունեցել, կնկատվեն էական շեղումներ: Շելով-Կովեդյաեւը նշեց, թե իր այդ քայլով ինքը ձգտում է վերացնել այն լարվածությունը, որ ստեղծվել է իր անձի նկատմամբ դրսեւորվող ուշադրությամբ, եւ նախագահ Ելցինին հնարավորություն տալ առանց բարդությունների շարունակել նոր քաղաքականությունը մերձավոր արտասահմանում:

«Որոշ հասարակական ուժերի կողմից իմ դերը խիստ չափազանցվել է, հեգնանքով ասաց Շելով-Կովեդյաեւը: *Բանը հասել է նրան, որ Ռուսաստանի հարավային որոշ մարզերում տարածել են մի գրքույկ՝ պատմական տեղեկանք, որով հաստատվում էր, թե Ռոստովի, Ստավրոպոլի եւ Կրասնոդարի երկրամասերը «բնիկ հայկական հողեր» են: Եւ այդ կեղծագրի հեղինակը ոչ այլ ոք է, քան ձեր խոնարհ ծառան: Ընդսմին, այդ «աշխատության» երկու հազար օրինակ առգրավվել էր Բաքու-Մոսկվա գնացքի ուղեկցորդից»:*

Մամուլի ասուլիսը երկար տեւեց: Բայց կարծում եմ «Ազգ»ի ընթերցողներին ավելի շատ կհետաքրքրեն Հայաստանին, Ղարաբաղին առնչվող հարցերը: Իսկ նման հարցեր շոշափվեցին:

Խոսելով Ղարաբաղի խնդրի մասին, Շելով-Կովեդյաեւն ասաց, թե այդ հարցը տարբեր մակարդակներով հանգամանորեն քննարկվեց օրերս Ադրբեջանի նախագահ Էլչիբեյի՝ Մոսկվա կատարած այցի ժամանակ: Անձամբ ինքը հանդիպում է ունեցել Ադրբեջանի արտգործնախարարի հետ: Շելով-Կովեդյաեւի կարծիքով, բարենպաստ պայմաններ են ստեղծված հաշտության կոնկրետ պլանի առարկայական քննարկման համար, նկատի ունենալով նաեւ հոգեբանական մթնոլորտի որոշակի փոփոխությունը (՞) դարաբաղցիների եւ Բաքվի կենտրոնական իշխանությունների ներկայացուցիչների միջեւ:

Լրագրողների այն հարցին, թե ՌԴ արտգործնախարարության ղեկավարության մեջ տարակարծություններ կա՞ն Ղարաբաղի խնդրի լուծման գործում, Շելով-Կովեդյաեւը պատասխանեց, թե նախարարությունում բազմակարծություն չկա այդ առնչությամբ: Պետք է հասնել խաղաղ դիվանագիտական լուծման՝ հենվելով Հելսինկիի տասը հիմնարար սկզբունքների վրա: Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ճանաչման հարցը Շելով-Կովեդյաեւը կապեց Ադրբեջանի ներքաղաքական իրադրության հետ:

Այնուհետեւ Շելով-Կովեդյաեւը հանգամանորեն անդրադարձավ Ռուսաստանի դերին, հատկապես երբ լրագրողներից մեկն ասաց, թե միջազգային հանրության կարծիքով, Ռուսաստանը միայնակ չի կարող կարգավորել կոնֆլիկտը, անհրաժեշտ է լայն համագործակցություն:

«Արդեն հինգ ամիս մենք հիանալի համագործակցում ենք միջազգային ընկերակցության հետ, մասնավորապես ԵԱՀԽ-ի շրջանակներում, ասաց Շելով-Կովեդյաեւը: *Մեր ոչ մի քայլը չի խանգարում վերջինիս հաշտարար գործունեությանը: Այսօր Ադրբեջանն էլ է ընդունում, որ Ռուսաստանի միջնորդության դերն ունի իմաստուն հնչողություն. մենք հարեւան ենք ու հազար թելերով կապված իրար հետ: Մեր ջանքերի շնորհիվ կողմերն արդեն հանգել են անմիջական խաղաղարար երկխոսություն սկսելու ընթացքին: Ի տարբերություն ուրիշ պետությունների, որոնց դիտորդների խումբն արդեն գործում է կոնֆլիկտի շրջանում»:*

«Ազգ»ի թղթակցի այն հարցին, թե ռուս-ադրբեջանական հարաբերությունները որեւէ բացասական դեր խաղացի՞ն հրաժարականի հարցում, Շելով-Կովեդյաեւը պատասխանեց՝ ոչ մի: Սակայն դժվար է ընդել, թե դա դիվանագիտական պատասխան չէ:

ՌՈՒԲԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Մեր սեփ. թղթակից, Մոսկվա

ԼՂՀ ղեկավարությունը հանդիպեց Հայաստանի ընդդիմադիր կուսակցությունների հետ

Սեպտեմբերի 15-ին Երեւանում Լեռնային Ղարաբաղի իշխանության ներկայացուցիչները, ԼՂՀ ԳԽ նախագահի պատասխանատու Գ. Պետրոսյանի գլխավորությամբ, հանդիպեցին Հայաստանի ընդդիմադիր կուսակցությունների ղեկավարների հետ: Գ. Պետրոսյանի խոսքերով, ղարաբաղյան պատվիրակության այցի նպատակը Հայաստանի իշխանությունների դիրքորոշման ճշտումն էր: Հայաստանի ղեկավարությունը հայտարարել էր, թե Ղարաբաղի հիմնահարցի լուծման ոչ մի բանակցություն չի անցնի առանց ԼՂՀ ներկայացուցիչների, ասաց Գ. Պետրոսյանը: Սակայն վերջին ժամանակներս Ալմա-Աթայում եւ Սոչիում կնքվեցին համաձայնագրեր, որոնց Լեռնային Ղարաբաղի իշխանությունները չմասնակցեցին: «Մենք տեսնում ենք այն բանի նախանշանը, որ Հայաստանի ղեկավարության կուրսը փոխվել է, եւ ուզում էինք իմանալ, իրո՞ք դա այդպես է», ասաց Ղարաբաղի պատվիրակության ղեկավարը: Մինչ այդ ԼՂՀ պատվիրակությունը հանդիպել էր Լեւոն Տեր-Պետրոսյանի եւ պետնախարարի պատասխանատու Վազգեն Մանուկյանի հետ: ■

Գեղամ Բաղդասարյան. «Անհրաժեշտ է պատժամիջոցներ կիրառել համաձայնագիրը խախտողի նկատմամբ»

«Ժամանակը ցույց տվեց, որ ղարաբաղյան առճակատման կարգավորման Ռուսաստանի առաքելությունը նույնպես անհաջողության մատնվեց», երեկ «Սնարֆ»ի թղթակցին հայտարարեց ԼՂՀ ԳԽ մամուլի քարտուղար Գեղամ Բաղդասարյանը: Նա մասնավորապես նշեց, թե հրադադարի պայմանավորվածության սոսրագրումից հետո ադրբեջանական կողմը ոչ միայն չդադարեցրեց, այլեւ ավելի ակտիվացրեց ռազմական գործողությունները Ղարաբաղում, հարձակողական գործողություններին զուգահեռ հայկական խաղաղ բնակավայրերը ռմբակոծելով եւ հրետակոծելով: Իմիջիայլոց, այդ ամենը տեղի էր ունենում ԼՂՀ-ում գտնվող ռուսական դիտորդների աչքի առաջ: Կյանքը ցույց է տալիս, նշեց Բաղդասարյանը, որ խախտողների նկատմամբ անհրաժեշտ է կիրառել տնտեսական եւ այլ պատժամիջոցներ, ինչն առանց ՄԱԿ-ի ակտիվ մասնակցության անհնար է: ■

Ադրբեջանում նշանակվել է նոր գլխավոր դատախազ

Ադրբեջանի միլլի մեջլիսը բավարարեց հանրապետության գլխավոր դատախազ Սուրադ Բաբաեւի հրաժարականի խնդրանքը: Նախագահ Ա. Էլչիբեյի առաջարկությամբ այդ պաշտոնին նշանակվեց իրավական հարցերով պետական խորհրդական Իսպիր Շիրինովը: Բաբաեւը հայտարարեց, թե հրաժարական է տալիս իր տեղակալների հետ չհաշտվելու պատճառով: ■

Քաղխորհուրդը փակուղու առաջ

Երեկ առավոտյան Երեւանի քաղխորհրդի նիստը դարձյալ սկսվեց ուշացումով: Քաղխորհուրդն անդրադարձավ նախորդ օրը կիսատ մնացած գործընթացի, նախագահի տեղակալների հաստատման հարցերին: Նախագահ Համբարձում Գալստյանի առաջարկած 10-11 հոգուց բաղկացած գործընթացի կազմին խորհրդարանը հավանություն չտվեց: Նախագահի կարծիքով, գործընթացը պիտի կազմվի քաղխորհրդի նախագահից, տեղակալներից, քարտուղարից եւ մեկ կամ երկու վարչության պետերից: Խորհուրդը հանգամանքներ էր, որ դա միջ է, եւ անհրաժեշտ է ընդգրկել գոնե 3-4 վարչության պետ եւ բաժինների վարիչներ: Նախկինում գործող 19 հոգանոց գործընթաց ունենալը նախագահին անարդյունավետ գտավ: Սակայն խորհրդարանը դեմ քվեարկեց այլ քանակով գործընթաց ձեւավորելուն: Հաջորդ հարցը նախագահի տեղակալների հաստատումն էր: Համբարձում Գալստյանը ներկայացրեց չորս տեղակալի թեկնածություններ՝ Հրանուշ Խառատյան, Վաչագան Թադեւոսյան, Արսեն Ասլանյան, Հրաչիկ Թորոսյան: Քվեարկությունների ժամանակ քվորում չապահովվեց, սակայն նախագահը չդադարեցրեց իր առաջարկները: Նա, իր խոսքերով, *«ժողովրդավարության մեջ նոր էջ բացող»* առաջարկ արեց՝ խորհրդարանին տալով առաջարկներ անելու հնարավորություն: Դահլիճն առաջարկն ընդունեց որոշ խաղի հրավեր: Սկսվեց թեկնածությունների առաջադրումը, դրանք կամ նախագահի առաջարկների կրկնությունն էին, կամ դահլիճին զվարճացնող տարբերակներ:

Ընդմիջումից հետո մի քանի խմբակցությունների անունից ելույթներ հնչեցին, որոնք պահանջում էին քննարկումներին ժամանակ հատկացնել, հարցը ոչնչի վրա չլուծելու համար: Պատգամավորական խմբակցություններից մեկը կրկնեց նախագահի առաջարկը Թորոսյանին տեղակալ ընտրելու մասին: «Համագործակցություն» խումբը նախագահին առաջարկեց ներկայացնել իր թեկնածությունները: Իսկ անկախ պատգամավորների «Փարոս» խմբակցության անունից նախագահին առաջարկվեց կամովին հրաժարական ներկայացնել: Նախագահը պատասխանեց, թե իր կամքը նրանց ցանկությունների հետ չի համընկնում: Ընդհանրապես, անդրադարձան քաղաքացիի հրաժարականի մասին քաղաքում տրջող լուրերին, որի կապակցությամբ առավոտյան քաղխորհրդի նախագահության նիստ էր հրավիրվել: Այդ լուրերը բնորոշվեցին որպես միանգամայն անհիմն:

Սակայն պարզվեց, որ քննարկումներն անարդյունք են ավարտվել: Քաղխորհուրդը հրաժարվեց թեկնածուներ առաջադրել, եւ նախագահը նորից սանձնեց իր իրավասությունների կատարումը: Այս անգամ առաջարկվեց առաջին տեղակալի պատասխանում հաստատել Կարապետ Ուրիքյանին կենսապահովման ոլորտում: Ընթերցվեց նախատեսվող գործընթացի ողջ ցանկը, որը փակ գաղտնի քվեարկությամբ պետք է հաստատվի խորհրդարանի կողմից: Այստեղ դահլիճը ընդվզեց՝ կենսապահովման ոլորտում խորհուրդը հաստատել է Սամվել Սավիսակյանին, որին նախագահն այժմ տեսնում է բնապահպանական եւ բարեգործական ոլորտը տնօրինող տեղակալի պատասխանում: Նման տրամաբանությամբ, ինչպես նշում էին պատգամավորները, նախագահը կարող է կամայականորեն տեղաշարժեր կատարել գործընթացում, կոնկրետ ոլորտում, կոնկրետ ծրագրով հաստատված տեղակալին տեղափոխել այլ ոլորտ, որտեղ նրա մասնագիտական կարողությունները չեն սուզվել: Հարցը դրվեց սուր, եւ քանի որ հակադիր կողմերը բարեկրթությամբ չէին փայլում, դահլիճում լարվածությունը սրվեց: Փոխադարձ մեղադրանքներից հետո, ինչպես ցիտ որակեց պատգամավորներից մեկը, նախագահն իր անզգույշ վարքով անհանդուրժողականության մթնոլորտ ստեղծեց եւ կասկածի տակ դրեց գործընթացի ստեղծման հարցը: Վերջում վիճակը մեղմացնելու նախագահի փորձերը, կարծում ենք, ի զորու չեղան հարթել տարաձայնությունը: Թեկնածուներին լսելու եւ ընտրությունների հարցը տեղափոխվեց հաջորդ շաբաթ:

Երբաղխորհրդի հաջորդ նիստը կիրավիրվի հաջորդ հինգշաբթի, բայց ստեղծված փակուղային վիճակից ելք դժվար թե մեկ շաբաթվա ընթացքում գտնվի:

ԱՐՄԻՆԵ ՕՀԱՆՅԱՆ

Թվերը Հայաստանի եւ ԼՂՀ-ի շրջափակման մասին

Ինչպես հաղորդում է «Նոյյան տապան» լրատվական գործակալությունը, ՀՀ կենտրոնական վիճակագրության վարչության Ղարաբաղի «Նորություններ» գործակալությանը հայտնած տվյալներով, տնտեսական եւ գազաշրջափակման պատճառով հայտնած տվյալներով, տնտեսական եւ գազաշրջափակման պատճառով 1992 թ. հուլիս-օգոստոս ամիսներին Հայաստան չի մտել 30 758 վագոն կամ նախատեսվածի 37 տոկոսը, 2 մլրդ. խոր. մետր գազ կամ Հայաստանի համար նախատեսված բաժնի 70 տոկոսը, ծեռնարկությունների չաշխատելու եւ արդյունք չարտադրելու պատճառով առաջացած վնասը կազմել է 20 մլրդ. ռուբլի գործող գներով: Ինչ վերաբերում է ԼՂՀ-ին, 1989-91 թթ. շրջափակման հետեւանքով հանրապետությունն արդյունաբերության բնագավառում կրել է 1490,2 մլն. ռուբլու վնաս, առողջապահության բնագավառում՝ 50 մլն. ռուբլու, կապիտալ շինարարության մեջ՝ 17,9 մլն. ռուբլու, տրանսպորտի եւ կապի բնագավառում՝ 11,8 մլն. ռուբլու վնաս: ■

Հաստատվել է Ադրբեջան-Թուրքիա օդային կապ

Այսօրվանից, հոկտեմբերի 16-ից 20-ը, ուղիղ օդային կապով կմիանան Ադրբեջանի եւ Թուրքիայի մայրաքաղաքները: Ինչպես «Խաբար սերվիս»ի թղթակցին հայտնեց «Ազալ» պետական կոնցեռնի գլխավոր տնօրեն Աղալյաք Ալիեւը, տեխնիկական նախապատրաստությունն արդեն ավարտված է, մնում է միայն թույլտվություն ստանալ Թուրքիայի քաղաքացիական ավիացիայի պետական դեպարտամենտից: Նրա խոսքերով, արդեն վեցերորդ ամիսն է, ինչ Իրանը չի վճարում իր ուղեւորների վարձը Ադրբեջանին: Եթե Իսլամական Հանրապետության ներկայացուցիչը չժամանի Բաքու, այդ հարցը կարգավորելու համար «Ազալ»ին ոչինչ չի մնում անել, քան դադարեցնել թռիչքները հարեւան պետություն: ■

digitised by A.R.A.R.@

Ղարաբաղ. Պրիդնեստրովիեի տարբերակ

Ոչ անհայտ Արկադի Վոլսկին, որ գլխավորում է Ռուսաստանի արդյունաբերողների եւ ձեռնարեցների միությունը եւ որի կշիռը գնալով մեծանում է Ռուսաստանում, եւ հնարավոր է նրա վաղվա ղեկավարներից մեկը դառնա, «Մոսկովսկիե նովոստի» շաբաթաթերթի էջերում (հոկտեմբեր 4, 1992) դարձյալ անդրադառնում է Ղարաբաղի խնդրին: Ինչո՞ւ: Ցույց տալու իր անկեղծ մտահոգությո՞ւնը, թե՞ Ռուսաստանի ներկա վարչապետի հարավային հաղթականությունը:

Լեռնային Ղարաբաղում իմ աշխատանքն ավարտվել է 1990 թ. հունվարի 16-ին: Այդ օրն ինքս ինձ խոսք տվեցի երեք տարի հրաժարակորեն չքննարկել իմ գործունեությունն այնտեղ: Չափազանց շատ դառնություն է մնացել այն պատճառով, որ չհաջողվեց հասնել խաղաղության, այն պատճառով, որ մեր նախաձեռնությունները մեռնում էին Մոսկվայում: Ես խոսքս կողահեմ, չեմ խախտի ժամկետը, որը լրանում է երկու ամսից, եւ այն ժամանակ ամեն ինչ կողատմեմ: Սակայն Լեռնային Ղարաբաղի հետ կապված վերջին իրադարձություններն ստիպում են կրկին մտածել այնտեղ տեղի ունեցողի մասին:

Ինձ թվում է, Ռուսաստանի պաշտպանության նախարար Պավել Գրաչովի նախաձեռնությունը, որը պաշտպանել է անվտանգության նախարար Վիկտոր Բարանիկովը, շարքային իրադարձություն չէ: Այն հաջողության հնարավորություններ ունի առաջին հերթին այն պատճառով, որ համապատասխանում է երկու հանրապետության ժողովուրդների եւ Լեռնային Ղարաբաղի բնակչության տրամադրություններին: Պատերազմն անցել է այն արյունալի գիծը, որը բնորոշ է ցանկացած կոնֆլիկտի, եւ որից այն կողմ անհայտությունն է:

Գրաչով-Բարաննիկով ծրագիրը տակտիկական է, կարճաժամկետ: Խնդիրը գիտակցաբար սահմանափակված է՝ կանգնեցնել արյունահեղությունը, դադարեցնել կրակը: Սակայն այս հարցը չլուծելով, հնարավոր չէ մտածել երկարաժամկետ խաղաղ բանակցությունների մասին: Ղարաբաղյան վեճը չի կարելի ինքնահոսի թողնել, այն հնարավոր է մարել միայն ժամանակավոր ուժային ազդեցությամբ: Այս խաղաղ նախաձեռնությունը ցուցաբերել են այն մարդիկ, որոնց թիկունքում են Ռուսաստանի բանակը եւ անվտանգության համակարգը: Երեւում է, միայն այդ ուժերով է հնարավոր աղահովել թեկուզ զինադադարի վերահսկումը: Գրաչովի առաջարկությունը 20 կմ-ոց չեզոք գոտի հաստատելու վերաբերյալ զուտ ռազմական գաղափար է, սակայն այն ինձ դուր է գալիս իր արդյունավետությամբ: Ղարաբաղի համար առաջարկվում է, ըստ էության, կարգավորման «պրիդնեստրովյան» եղանակը: Հնարավոր է այն կատարյալ չէ, սակայն ի՞նչ անել, երբ մյուս միջոցներն անկենսունակ են դուրս գալիս:



Եթե ժամանակին Մոսկվայում հաշվի առնեին մեր առաջարկությունները...

Մենք չենք կարող, եթե նույնիսկ ցանկանանք, այժմ հեռանալ Կովկասից, այդտիսի կոչերը միամիտ են: Ռուսաստանն այնտեղ է մտել 100-ից ավելի տարի առաջ եւ դրանով ստեղծել այն իրականությունը, որ հիմա գործում ենք:

Կայունության քաղաքականությունը Կովկասում չէր առանձնանում նրբանկատությամբ: Օրինակ, 1905 թ. ռուս նահանգապետն սպասեց մինչեւ ավարտվեն ազգամիջյան բախումները Բաքվում, եւ հետո զորք մտցրեց. սա ինձ ինչ-որ բան է հիշեցնում: Սակայն քաղաքական պրոֆեսիոնալիզմն այն ժամանակ ավելի բարձր էր: Կովկասում, համենայն դեպս, էթնիկական սահմաններ չկային, դրանք հայտնվեցին 1917-ից հետո:

Այսօր Ռուսաստանն իրեն չի կարող թույլ տալ Անդրկովկասում դիտորդ լինելու շռայլությունը: Այդ շրջանը Հյուսիսային Կովկասի հետ ամբողջություն է կազմում, որտեղից Սավրոպոլ եւ Կրասնոդարի երկրամաս մի ոտնաչափ է: Կովկասի կոնֆլիկտների կարգավորումը խաղաղություն կբերի Ռուսաստանի հարավային սահմաններին:

Ռուսաստանին սպիտում են «հաշտարար» դառնալ Ղարաբաղի համար: Օրինակ, մեր նավթահանքերում օգտագործվող նավթահան սարքավորումների 2/3-ը արտադրվում է Ադրբեջանում: Նույնն է ալյումինի եւ նավթավերամշակման բնագավառում: Իսկ Հայաստանի հետ հարաբերություններն ազդում են հայկական սփյուռքի, որի զգալի հատվածը կենտրոնացված է Ռուսաստանի քաղաքներում, տրամադրությունների վրա:

Այն, որ վերջերս հայտնվում են Ղարաբաղի խնդրի կարգավորման արտասահմանյան ծրագրեր, տագնապալի է: Թեկուզ դրանք, ինչպես օրինակ ամերիկյանը՝ տարածքային փոխանակումների մասին, բացարձակապես իրական չեն: Միայն այն, որ դրանք կան, լրացուցիչ անգամ ցույց է տալիս, որ *«տակը մի բան կա»*: Ազդեցության ոլորտ, որը թափուր է մնում ժամանակավոր թուլացած տերության հեռանալուց հետո, ձգտում են բռնանցել ուրիշները:

Սակայն հետաքրքրելով իր ազգային շահերը Կովկասում, Ռուսաստանն իրավունք չունի կրկնել ԽՍՀՄ քաղաքականությունը: Այլապես միջոցները վարկաբեկում են նպատակը, իսկ արյունահեղությունը, ինչպես Հյուսիսային Իռլանդիայում, կձգվի տասնամյակներ: ■

Եվրոպական համագործակցությունը նոր օգնություն կուղարկի Հայաստան

Առողջապահության փոխնախարարի մայրության եւ մանուկների հարցերով խորհրդական Անահիտ Դեմիրճյանը «Նոյյան տապան»ի թղթակցին հայտնեց, որ հուլիսի վերջին Հայաստանը ֆրանսիական Կարմիր խաչի միջնորդությամբ Եվրոպական համագործակցությունից որպես օգնություն ստացել է 100 տոննա «Նովոլակ» մանկական սնունդ: Օգնությունը բաժանվել է Հայաստանի բոլոր մանկական պոլիկլինիկաներին: Սկզբնապես որոշված էր կրծքի երեխաներին մանկական սննդով աղահովել 3 ամիս, սակայն «արհեստական սնուցում» ստացողների մեծ թվաքանակի պատճառով սնունդը բավականացրեց 2-2,5 ամիս: Խորհրդականը հայտարարեց, թե շուտով սպասվում է Եվրոպական համագործակցության նոր օգնություն (1000 տոննա մանկական սնունդ): Ֆրանսիական Կարմիր խաչի ներկայացուցիչները մոտ երկու շաբաթ է գտնվում են Հայաստանում եւ նախապատրաստական աշխատանքներ են կատարում օգնությունն ընդունելու համար: Օգնությունը բաղկացած է երկու մասից.

1. 400 տոննա «Նովոլակ H1» (մինչեւ 6 ամսականների համար) մանկական խառնուրդ եւ «Նովոլակ H2» (6-12 տարեկաններին):

2. 600 տոննա մանկական սնունդ 6 ամսականից 2 տարեկան մանուկների համար: Դա հիմնականում սոյայի շիլա է, փոշիացված բանջարեղեն եւ այլն:

Ինչպես հայտարարեց Դեմիրճյանը, օգնության ստացման հարցում ամեն ինչ կախված է երկաթուղիների վիճակից:

Ղարաբաղը Բոսնիայից բոլորովին հեռու չէ

«Առանց դրսից քաղաքական միջնորդության Կովկասում փոքր պատերազմը կվերածի բալկանյան հակամարտության», ասում է Միչիգանի (ԱՄՆ) համալսարանի պրոֆեսոր Ռոնալդ Գրիգոր Սյունին:

Խորհրդային Միության ավերակների վրա ազգայնամոլության հրաբխային ժայթքումը բերեց նրան, որ որոշ ժողովուրդներ անկախության մեջ տեսնում են միայն առաջին քայլը դեպի էթնիկապես մաքուր պետությունների ստեղծումը: Այդ նպատակին հասնելու համար նրանք արտաքսում եւ ահաբեկում են ազգային փոքրամասնություններին:

Հայաստան եւ Ադրբեջան անկախ հանրապետությունները պատերազմում են չորս ճակատով. միմյանց դեմ եւ երկու ինքնավար մարզերի՝ Լեռնային Ղարաբաղի (Ադրբեջանի տարածքում հայկական անկլավի) եւ Նախիջեւանի (Հայաստանի հարավային սահմանի անկլավի) վրա հսկողություն ստեղծելու համար: Վրաստանը, որը գտնվում է Հայաստանից հյուսիս, ձգտում է իրեն ենթարկել Աբխազիան եւ Օսիան:

Թուրքիան տագնապով է հետեւում թուրք-ադրբեջանցիների եւ իրենց ավանդական թշնամիների՝ հայերի միջեւ հակամարտությանը: Իրանը փորձում է միջնորդի դեր խաղալ հայ-ադրբեջանական հակամարտությունում, վախենալով, որ իր հյուսիսային սահմաններում-տեղի ունեցող անկարգությունները կտեղափոխվեն ադրբեջանցիներով բնակեցված սահմանամերձ շրջաններ:

Անցած գարնանը հայերը Լեռնային Ղարաբաղում մի շարք հաջող գործողություններ իրականացրին, այնտեղից դուրս շպրտելով ադրբեջանցիներին եւ ստեղծելով մի միջանցք Լեռնային Ղարաբաղի Հանրապետության եւ Հայաստանի միջեւ: Սակայն ադրբեջանցիներն անցան հակահարձակման, որի ընթացքում Հայաստանի տարածքում ոմբակոծեցին եւ գրավեցին մի շարք բնակավայրեր: Իրանի եւ ԵԱՀԽ-ի փորձերը հակամարտությունը կարգավորելու ուղղությամբ ձախողվեցին, եւ Հայաստանը դիմեց ՄԱԿ-ին՝ միջամտության խնդրանքով: Այդ հակամարտությունը, որը կարող է վերածել իսկական պատերազմի՝ իր մեջ ներգրավելով ԱՄՆ-ի դաշնակից Թուրքիային եւ նրանց հակառակորդ Իրանին, շրջափակում է ժողովրդավարությունը Կովկասում:

Եթե հանրապետություններից մեկը միակողմանիորեն իր տիրապետությունը փաթաթի Լեռնային Ղարաբաղին, առյա նրանց միջեւ պայքարը կհարատեւի: Միայն ՄԱԿ-ի եւ մեծ պետությունների միջնորդությունը ամրացված համապատասխան երաշխիքներով, ընդունակ է Անդրկովկասին խաղաղություն բերել:

Չորս տարվա անընդհատ մարտերից հետո ակնհայտ դարձավ, որ ոչ Հայաստանի սկզբնական պահանջը՝ իրեն միացնել Լեռնային Ղարաբաղը, ոչ Գորբաչովի՝ Ադրբեջանի ներսում հայկական ինքնավարություն ստեղծելու ծրագիրը, գործնականում իրականանալի չեն: Որպես ընդունելի որոշում կարող է հանդիսանալ էթնիկական սկզբունքով Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ նոր սահմանների հաստատումը (եթե չհաշվենք անկախ Լեռնային Ղարաբաղի մասին ուտոպիստական նախագիծը):

Առանց քաղաքական միջամտության, այս փոքր, բայց արյունալի պատերազմը կվերածի Բոսնիայի ռազմական հակամարտության, որը կբերի Լեռնային Ղարաբաղից հայերի արտաքսման փորձերի եւ այս շրջանում անվերջ պարտիզանական պատերազմի:

ՄԱԿ-ը Միացյալ Նահանգների ակտիվ մասնակցությամբ ընդունակ է երկու կողմերին համոզել նստել բանակցությունների սեղանի շուրջ եւ նրանցից կրակի դադարեցման վերաբերյալ համաձայնություն ստանալ, որից հետո Լեռնային Ղարաբաղ կուղարկվեն խաղաղարար ուժեր՝ տարածքային հակամարտությունները կարգավորելու նպատակով:

Միայն քաղաքական միջամտությունը հնարավորին սեղմ ժամկետում կկարողանա կանխարգելել ռազմական միջամտությունը Լեռնային Ղարաբաղում, որում Թուրքիան, Իրանը եւ շրջանի այլ երկրներ կարող են ներքաշվել հակամարտության մեջ:

«Նյու Յորք թայմզ»

Էլչիբեյը Մոսկովյան պայմանագրի մասին

Ադրբեջանի նախագահ Աբուլֆազ Էլչիբեյը «Թուրան» գործակալության թղթակցի հետ զրույցի ժամանակ Մոսկվայում կնքված պայմանագիրը համեմատեց մի մեքենայի հետ, որի «արդյունավետությունը կախված կլինի Ռուսաստանի եւ Ադրբեջանի պետական կառույցների գործունեությունից»:

Նախագահը, մեկնաբանելով հեռանկարները, որոնք նախատեսում է տվյալ պայմանագիրը, ասաց, որ Ադրբեջանի եւ Ռուսաստանի միջեւ կնքված պայմանագիրը հնարավորություն է տալիս կոնկրետ երկկողմանի համաձայնագրերի հիման վրա լուծել Ադրբեջանի համար հրատապ հարցեր, այդ թվում ազգային բանակի տեխնիկական հագեցվածության հարցը:

Նախագահի աղարաից հայտնում են, որ նմանատիպ պայմանագիր կստորագրվի Թուրքիայի հետ հոկտեմբերի վերջին, երբ Էլչիբեյը պաշտոնական այցով մեկնի Անկարա: Այդպիսի պայմանագրեր կստորագրվեն նաեւ Ուկրաինայի եւ Ղազախստանի հետ: Բարեկամության եւ համագործակցության պայմանագրեր եգիպտոսի, Սաուդյան Արաբիայի եւ Իսրայելի հետ կարող են կնքվել 1993 թվականի սկզբին: ■

Անտուան Բլանկ. «Աբխազիայի մասին տեղեկացված եմ»

ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի տեղակալ Անտուան Բլանկը հայտարարել է, թե բավականաչափ տեղեկացված է, որպեսզի օբյեկտիվ զեկույց ներկայացնի ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդ:

Չորեքշաբթի օրը Սուխումում կայացած մամուլի ասուլիսում Բլանկը նշեց, թե Աբխազիայի հակամարտությունը լուրջ վտանգ է սպառնում ամբողջ շրջանին: Սակայն նա հույս հայտնեց, որ Վրաստանի Գերագույն խորհրդի նախագահի պաշտոնում ընտրված Էդուարդ Շեւարդնաձեն, որն «ահռելի հեղինակություն ունի ՄԱԿ-ում», երկրում խաղաղություն եւ ժողովրդավարություն կհաստատի: Բլանկը հայտարարեց, թե վրաց-աբխազական հակամարտության խնդաղ լուծումը հնարավոր է միայն սեպտեմբերի 3-ի պայմանավորվածությունների կատարման դեպքում: Նա հայտնեց, որ Սուխումում կաշխատեն ՄԱԿ-ի երկու փորձագետներ, որոնք «մոսկովյան հանդիպման վերջնական փաստաթղթի կատարման ուղիներ կփնտրեն»: ■

Անահիտ Բայանդուրը Բաքվում

Ըստ Բաքվի «Թուրան» լրատվական գործակալության հաղորդման, հոկտեմբերի 14-ին մերձմայրաքաղաքային Զագուլբա ավանում բացվեց «Մենք դեմ ենք բռնությանը» միջազգային սեմինարը, որին մասնակցում էին Ադրբեջանի հելսինկյան քաղաքացիական ժողովի ազգային կոմիտեն, ԳՖՀ-ի բունդեսագի եւ Թուրքիայի դեմոկրատական հատարակայնության ներկայացուցիչներ: Սեմինարին մասնակցում է նաեւ Հայաստանի ԳԽ պատգամավոր Անահիտ Բայանդուրը: Սեմինարը կավարտվի հոկտեմբերի 15-ին: Նախատեսվում է նախաձեռնել հելսինկյան քաղաքացիական անդրկովկասյան միացյալ բյուրո: ■

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ազգային Ինքնորոշում Միավորումը հոկտեմբերի 17-ին, ժամը 16:00-ին Անկախության հրապարակում հրավիրում է ազգահավաք նվիրված ազգային բանակի ստեղծման եւ համընդհանուր զինակոչ հայտարարելու հարցերին:

Բոլոր այն կազմակերպությունները եւ անհատ մարդիկ, ովքեր ցանկություն ունեն ազգահավաքում ելույթ ունենալու, դիմեն ԱԻՄ-ի կենտրոնական գրասենյակ՝ պատասխանատու քարտուղարին:

digitised by A.R.A.R.@

ՍԱՀՄԱՆԱԴԻՐ ԺՈՂՈՎ

Ինչով է պայմանավորված դրա անհրաժեշտությունը

Սահմանադրության ու Սահմանադիր ժողովի անհրաժեշտության մասին խոսակցությունները նոր չեն մեզանում, եւ ինչպես մի քիչ ամեն հարց՝ քաղաքական քաշքշուկների առարկա են: Քիչ են լուրջ մտորումներն այդ մասին, եւ սորեւ լույս տեսնող հոդվածը թերեւս այդ քչերից մեկն է, որի համար էլ հրաւարակում ենք այն, հակառակ որ Ռամկավար ազատական կուսակցությունը այլ մոտեցում ունի Սահմանադիր ժողովին: Ինչպես նշվել է տարբեր առիթներով,՝ ՀՌԱԿը գտնում է, որ ներկա պայմաններում, երբ անգամ խորհրդարանի բափուր տեղերի համար իրարահաջորդ ընտրություններն են տաղալվում ու դեռեւս չի կայացել բազմակուսակցական համակարգը, աննպատակահարմար, անգամ անկարելի է արդար ընտրություններով ստեղծել օրենսդիր մի նոր մարմին՝ Սահմանադիր ժողով, բաղկացած համամասնական, պարկեշտ եւ կարող ուժերից: Մենք գտնում ենք, ելնելով առկա վիճակից, որ Գերագույն խորհուրդը կարող է ստեղծել հատուկ հանձնաժողով, համալրված արտախորհրդարանական մասնագետներով, որը հիմնվելով ներկայացված նախագծերի, առաջարկների եւ արդեն իսկ ընդունված մի շարք օրենքների վրա, ստեղծել մեր սահմանադրությունը:

Հանրահայտ է, որ հանրաքեւեական համակարգում ժողովուրդն է իշխանության միակ օրինական աղբյուրը, եւ հենց նա է ստեղծում այն հիմնական կանոնադրությունը, որը սահմանում է կառավարման տարբեր մարմինների լիազորությունները:

Այդ է պատճառը, որ հանրաքեւեական սկզբունքի խիստ դահեղանումը դահանջում է դիմել այդ աղբյուրին, երբ անհրաժեշտ է իշխանությունն ընդարձակել, սահմանափակել կամ վերակազմել:

Ջ. Մեղիսոն

Սահմանադրությունը պետության հիմնական օրենքն է, որն ամրագրում է պետության, հասարակության եւ նրա անդամների գոյության եւ գործունեության, ինչպես նաեւ միմյանց միջեւ փոխհարաբերությունների սկզբունքները, ժողովրդի աղբելակերտի կարեւորագույն ավանդները: Այն ներառում է նաեւ տվյալ երկրի քաղաքական համակարգը:

Սահմանադրությունը համաժողովրդական կամքի արտացոլումն է կառավարման եւ փոխհարաբերությունների վերաբերյալ:

Ելնելով հասարակության զարգացման պատմական փորձից, ձեւավորվող կամ իրենց քաղաքական համակարգը վերափոխող երկրները ձեռնամուխ են լինում հիմնական օրենքի ստեղծմանը, որպես պետության կառավարման անհրաժեշտ պայմանի:

Հետեւաբար ժողովուրդը, որը ձգտում է պետություն ունենալ, չի կարող երկմտել սահմանադրություն ունենալու հարցում, ինչպես որ չի կարող երկմտել օրինականության եւ արդարության հարցում: Այսինքն երկրի իրավիճակի կայունացումը ուղիղ համեմատական է սահմանադրության ստեղծմանը:

Համաշխարհային իրականության մեջ գոյություն ունի սահմանադրության ստեղծման երկու առավել տարածված ճանապարհ.

1. Գործող իշխանություններ՝ օրենսդիր կամ գործադիր մարմին:

2. Իշխանություններից անկախ եւ առանձին գործող հատուկ այդ նպատակով ստեղծվող մարմին՝ Սահմանադիր ժողով:

Քաղաքակիրթ երկրներից ոմանց կողմից առաջին ճանապարհն օգտագործելու մասին խոսելիս անհրաժեշտ է նաեւ հիշատակել, որ այդ ուղիով գնալիս նրանք արդեն իսկ ունեցել են իրենց ձեւավորված հասարակությունը, պետությունը, իրենց ժողովրդին ծառայող քաղաքական համակարգը եւ միայն հասարակության էվոլյուցիոն զարգացման արդյունքում է առաջացել մի համակարգը մեկ այլով՝ ավելի կատարյալով փոխարինելու եւ ավելի ներդաշնակ դարձնելու անհրաժեշտությունը: Իսկ այն երկրներում, որտեղ հասարակության զարգացման մեջ տեղի են ունեցել կտրուկ փոփոխություններ (ազատագրական պայքար, հեղափոխություն, պատերազմի ժամանակ կրած պարտություն), եւ նախկին իշխանությունները կամ ի զորու չեն եղել, կամ կազմալուծվել են, եւ կամ անվստահության են արժանացել, օգտագործվել է Սահմանադիր ժողովի ճանապարհը:

Քննարկենք երկրում գործող իշխանությունների՝ օրենսդիր կամ գործադիր մարմինների միջոցով սահմանադրության ստեղծման ճանապարհը:

Գործադիր մարմնի կողմից այն կարող է ընդունվել, եթե երկրում բացակայում է իշխանությունների տարանջատման սկզբունքը, եւ գործում է միապետական համակարգը եւ կամ ուժեղ նախագահական իշխանությունը: Երկու դեպքում էլ որոշում կայացնողը անհատ է կամ ենթակա է անհատի կամքին:

Այսինքն իշխանությունը կենտրոնացված է անձի կամ անձանց փոքր խմբի ձեռքում, որոնք ոչ միայն սխալվելու ավելի մեծ հնարավորություն ունեն, այլեւ առաջնորդվելով ունեցած իշխանությունը պահպանելու օրինաչափ դարձած մղումով, սահմանադրությունը կկերտեն դրան համապատասխան: Արդյունքում խմբային շահերը կտրամադրեն ազատություններին, որոնք հասարակության բնականոն զարգացման ամենաէական գործոններն են եւ ժողովրդավարության հիմքը: Այսինքն տվյալ փաստաթուղթը կծառայի ոչ թե հասարակության շահերին, որի համար այն կոչված է, այլ անհատի կամ խմբի: Եւ նույնիսկ եթե նման անհատը՝ ժողովրդավարության դրսեւորք ստեղծելու նպատակով, ստեղծված այդպիսի փաստաթուղթ դնի «հանրաքվեի միջոցով ժողովրդի վավերացմանը», առա դժվար չէ պատկերացնել, թե ինչպես նա կօգտագործի իր փաստորեն անսահման իշխանությունը անհրաժեշտ արդյունքի հասնելու համար:

Այս ճանապարհի մյուս տարբերակը -իշխանության օրենսդիր մարմնի կողմից դրա ընդունումն է: Սակայն ՀՀ-ում պետականության եւ քաղաքացիական հասարակության ձեւավորմանը զուգընթաց առաջ է գալիս ներկայացուցչական մարմինների հաճախակի վերափոխման անհրաժեշտություն, քանի որ դրանք այլեւս չեն կարողանում լիարժեք արտահայտել ժողովրդի շահերը: Մյուս կողմից, օժտված լինելով իշխանությամբ, նրանք նույնիսկ ամենաազնիվ մղումների դեպքում անդայմանորեն խուսափելու են անաչառությունից ու անկողմնապահությունից: Սահմանադրություն կերտող օրենսդիր մարմնի (մեզ մոտ՝ Գերագույն խորհուրդ) անդամները, ինչպես եւ իշխանությամբ օժտված գրեթե բոլոր մարդիկ առաջնորդվելու են իշխանությունը պահպանելու եւ ավելացնելու մղումով՝ ելնելով իրենց ունեցած դիրքից:

Ինչպես ԱՄՆ-ի սահմանադրության հայրերից մեկը՝ Ջ. Մեդիսոնն է նշում իշխանության տարանջատմանը վերաբերող իր աշխատություններից մեկում, *«ոչ ոք չի մերժի այն փաստը, որ իշխանությունն իր էությամբ միշտ ձգտում է ներխուժել այլ ոլորտներ (լիազորությունների այլ շրջանակներ), եւ նրան իր համար նախատեսված սահմաններում պահելու նպատակով պահանջվում են լուրջ միջոցառումներ»:*

Եթե նկատի ունենանք, որ Մեդիսոնի կողմից նշված միջոցառումները կազմում են սահմանադրության մի մասը, առա պարզ է դառնում, որ ներկայումս, այդ միջոցառումների բացակայության պայմաններում սահմանադրություն ստեղծելիս ոտնահարվել են արդարությունն ու անաչառությունը:

Սահմանադրության առանձնահատկությունն այն է, որ այն գերակա է մնացյալ օրենքների, ինչպես նաեւ պատասխանատու անձանց նկատմամբ: Իշխանության մարմինները պետք է ենթարկվեն այդ օրենքներին եւ ոչ թե իրենց լիազորություններն ընդարձակելու առաջին իսկ ցանկության դեպքում հեշտությամբ փոխեն այն: Այսինքն, չպետք է նրանց օժտել այս սկզբունքային փաստաթուղթն ընդունելու բացառիկ լիազորությամբ, մանավանդ որ մինչ այդ տված լիազորությունները նրանք չեն օգտագործել ինչպես հարկն է:

Միմիայն խիստ անհրաժեշտության դեպքում եւ հասարակական խնդիրները լուծելու ճանապարհին, արդեն իսկ ստեղծված սահմանադրության կողմից սահմանված բոլոր երեք իշխանության մարմինների համաձայնությամբ կարելի է փոփոխություն մտցնել այդ օրենքներում: Իսկ մինչեւ սահմանադրության ընդունումն այդ փոփոխությունականությունը: ՀՀ Գերագույն խորհուրդը հավատարիմ մնալու համար իր իսկ ընդունած որոշումներին եւ անկախության հռչակագրին, պետք է կարճ ժամանակում ձեռնամուխ լիներ այդ որոշումների կատարմանը՝ մասնավորապես հիմնական օրենքի ստեղծմանը, որից հետո պետք է կազմակերպվեին նոր ընտրություններ):

Այս փաստարկները խոր անվստահություն են առաջացնում ՀՀ-ում գործող իշխանությունների նկատմամբ: Այսպիսի պարագաներում հասարակության համար առանձնահատուկ կարեւորություն ունեցող երկարաժամկետ փաստաթղթի՝ սահմանադրության ստեղծումը վստահել ՀՀ ԳԽ-ին կամ իշխանության մյուս մարմիններին կնշանակի գիտակցաբար դատապարտել Հայաստանը:

Այժմ անդրադառնանք Սահմանադիր ժողովի միջոցով սահմանադրության ստեղծման ճանապարհին:

(Մեզ մոտ շահարկվում է այնպիսի ընդդիմադիր փաստարկ, ըստ որի աշխարհում չի եղել մի երկիր, որն ունենալով օրինական իշխանություն, դիմեր սահմանադրության ստեղծման Սահմանադիր ժողովի ճանապարհին: Անդրադառնանք ԱՄՆ-ի փորձին, ոչ միայն նրա համար, որ այդ ճանապարհը առաջին անգամ նրանք են որդեգրել, ոչ միայն այն պատճառով, որ քաղաքական հեղհեղուկ վիճակում նրանք կարողացան ստեղծել այնպիսի սահմանադրություն, որ անցած 200 տարիների ընթացքում կրել է միայն 27 փոփոխություն, այլեւ այն պարզ պատճառով, որ սահմանադիր ժողովին հակադրվողները մոռացության են մատնել (իսկ գուցե չգիտեն), որ օրինական իշխանություն ունեցել են նաեւ ամերիկյան նահանգները: Չէ՞ որ մինչեւ Կոնվենտի կողմից նոր Սահմանադրության ընդունումը գոյություն ուներ այդ նահանգների կոնֆեդերատիվ իշխանություն: Եւ Կոնվենտը, որը կոչված էր կատարելագործել գործող օրենքները, երկիրը քաոսից ու պատերազմի վտանգից դուրս հանելու համար, ստանձնելով ավելի մեծ պարտականություն, ստեղծեց ԱՄՆ-ի սահմանադրությունը):

1. Ամենաէական առավելությունը, որ ունի սահմանադիր ժողովը, այն է, որ նա օժտված չէ պետական իշխանությամբ եւ չունի իշխանության այս կամ այն մարմնի լիազորություններն ընդարձակելու որեւէ շահագրգռվածություն: Այս դեպքում սահմանադրության ստեղծումով զբաղվում են իշխանությունից հեռու գտնվող անձինք, ինչը հնարավորություն է տալիս անաչառ մոտեցման՝ եւ իրավիճակի խորը ուսումնասիրման պայմաններում, զբաղվելով միայն այդ աշխատանքով, ստեղծել առավել մնայուն եւ կայուն օրենքներ, որոնք չպետք է փոփոխվեն անձի կամ խմբի քմահաճույքով: Նրա միակ նպատակն է լինելու սահմանադրության ստեղծումը:

2. Սահմանադիր ժողովը, ընտրված լինելով ազատության եւ ժողովրդավարության պայմաններում, բազմակուսակցական, խառը ընտրական համակարգով, ձեռք է բերում իրավական ուժ եւ իր գործունեության ընթացքում միայն նա է իրավունք ունենում սահմանադրական օրենքներ ընդունել: Այս իրավասությամբ, մինչեւ հիմնական օրենքի ընդունումը, Սահմանադիր ժողովը կարող է մասամբ զսպել գործող իշխանությունների կամայական գործողությունները:

3. ՀՀ-ում պետական կառավարման լիարժեք համակարգի բացակայությունը, ինչպես նաեւ բարդագույն պատասխանատու անձանց անկարողությունը կամ նրանց մոտ նման ցանկության բացակայությունը հնարավորություն չի տալիս համակարգել եւ ներդաշնակել հանրապետությունում գոյություն ունեցող բոլոր խավերի եւ շերտերի շահերն արտահայտող ուժերը եւ դրանք ուղղել մի նպատակի՝ հասարակության հոգեւոր արժեքների բարձրացմանը, հասարակության անվտանգության եւ բարեկեցության ապահովմանը: Սահմանադիր ժողովը, կազմվելով բազմակուսակցական համամասնական ընտրակարգի հիման վրա, հնարավոր առավելագույն չափով կարտահայտի հայ ժողովրդի բոլոր մեծ ու փոքր խավերի եւ շերտերի շահերը: (Բազմակուսակցական ընտրությունների արդյունքում ժողովրդի կողմից ստացած ձայների քանակի համաձայն կոորդի տվյալ կազմակերպության ժողովրդի մեջ ունեցած հեղինակության չափը, այսինքն կդարձվի, թե այդ կազմակերպությունը ժողովրդի ո՞ր տոկոսի շահերն է արտահայտում): Այն կդառնա ՀՀ-ում գործող բոլոր հասարակական-քաղաքական եւ հասարակական կազմակերպությունների գործունեությունը տվյալ կարեւոր խնդրի շուրջ համակարգող եւ ներդաշնակող մարմին:

4. Այս պատճառով խիստ արդիական է դառնում հանրապետությունում առկա բոլոր ուժերի (կամ առնվազն դրանց մեծամասնության) ներկայացուցիչներից կազմված մի մարմնի ստեղծումը, որը հեռանալով ներկայիս ամենօրյա դժվարություններից, կզբաղվեր միմիայն երկրի սահմանադրության մշակմամբ: Սահմանադիր ժողովը, իրականացնելով սահմանադրություն ստեղծելու դժվարին եւ երկարատեւ աշխատանքը, Գերագույն խորհրդին ազատում է այդ խնդրից, հնարավորություն ընձեռելով նրան աշխատել հանրապետությունն ստեղծված իրավիճակից դուրս բերելու բավականին խրթին խնդրի վրա, հակակշռելու եւ զսպելու գործադիր եւ դատական իշխանությունների հնարավոր անօրինականությունները ու կամայականությունները (Գերագույն խորհուրդն այստեղ կարող է դրսեւորել իր անաչառությունն ու պիտանիությունը), եթե իհարկե նա իսկապես մտահոգված է հասարակության բարեկեցությամբ եւ ժողովրդավարության հաստատումով: Սահմանադրության ստեղծումը նախ եւ առաջ ենթադրում է վերոհիշյալ ուժերի ունեցած սկզբունքների, առաջարկների, հասկացությունների եւ ընկալումների հստակեցում եւ պարզաբանում, որը հնարավորություն կտա փոխզիջումների ճանապարհով գալ խնդիրների լուծման մի ընդհանրական եզրակացության: Սահմանադիր ժողովը կհանդիսանա ամենամասնական խնդիրը, որի շուրջ եւ ակամա կմիավորվեն:

Սահմանադիր ժողովը, ի տարբերություն գործող իշխանությունների, իր առջեւ դրված խնդիրը լուծելիս կկարողանա առպահովել անաչառությունը, հասարակության բոլոր շերտերի շահերի արտացոլումը, կնպաստի գոյություն ունեցող ուժերի իրական միասնությանը, ինչպես նաեւ կթեթեւացնի Գերագույն խորհրդի գերծանրաբեռնված օրակարգը, հնարավորություն տալով նրան զբաղվել ստեղծված իրավիճակից դուրս գալուն ուղղված ՀՀ նախագահի ծրագրերն արտացոլող օրենքների նախագծերի փաթեթների ընդունմամբ:

Այսպիսով, հարգարժան ընթերցող, Սահմանադիր ժողովի անհրաժեշտության որոշումը մնում է ձեր խղճին, քանի որ ի վերջո ժողովրդի կամքն է որոշիչը, եւ նա է ի զորու փոփոխություն մտցնել ստեղծված իրավիճակում:

ՎԱՐԴԱՆ ԱՍՇԱՏՐՅԱՆ
Սեպտեմբեր, 1992

digitised by A.R.A.R.@

ՋԵՄՖԻՐԱ ՎԵՐԴԻԵՎԱ. ԿԱՆԱՅՔ ԱՌԱՋԻՆՆԵՆ ԸՆԿՆՈՒՄ ՀԱՐՎԱԾԻ ՏԱԿ

«Ջավակին կորցրած հայուհու ցավը չզգացող ադրբեջանուհին կին չէ, այլ էգ գայլ»

Մոսկվայում տպագրվող ռուսամերիկյան «We/Мы» հանդեսն ահա թե ինչ է տպագրել Ադրբեջանի կանանց կոմիտեի նախագահ Զեմֆիրա Վերդիեւայի մասին:

Շենքերի աղակիներից այն կողմ, ուր փարթամորեն աճում է ճարդոսը, ինձ ընդունում է իր կաբինետությունը գիտակցող մի կին: Կծող բառիկների առաձգում ինձ առաջարկելով ճաշակել հազվագյուտ խաղողավենիքներ, նա նկարագրում է իր հայրենիքի հեռանկարները 21-դ դարում:

Մինչ ադրբեջանական մյուս խաղաղագետները հրճտում են միմյանց՝ մրցելով Հայաստանի վերաբերյալ հերթական լուսանցքներն արտասանելով, Զեմֆիրա Վերդիեւան, որը ղեկավարում է Ադրբեջանի կանանց կոմիտեն, իրեն դրսեւորում է որպես արեւմտյան գաղափարների մշտական հետեւորդ:

Իր գոյության 70 տարիների ընթացքում այդ կոմիտեն հարյուրավոր ակտիվիստների եւ միլիոնավոր զինակիցների հետ կանանց հանրահավաքներում քարոզում էր ավելի ու ավելի շատ զոհաբերվել հանուն արտավոր կոմունիզմի: Այժմ Վերդիեւայի գլխավորությամբ կոմիտեն պայքարում է իսլամական արմատականության դեմ:

«Նոր կառուցվածքների ձեւավորմանը եւ պատերազմից մարդկանց հոգնածությանը զուգահեռ կանայք ավելի ու ավելի են մղվում առաջին պլան, ասաց Վերդիեւան: *Նրանք ուզում են ազդեցություն ունենալ: Մեր փխրուն ժողովրդավարությունը տղամարդկանց առջեւ հնարավորություն բացեց, իսկ կանանց առջեւ՝ ավելի լայն»:* Վերդիեւայի ազդեցությամբ է չափվում հեռավորությունը Ադրբեջանի եւ Պարսից ծոցի ու Ասիայի իսլամական պատժիչ պետությունների միջեւ: Այդ խնդանությունն էլ ապացույցներ է բերում, թե երկրի կառավարման համար որքան վաս է նախապատրաստված եղել Ադրբեջանի նոր կառավարությունը:

Վերդիեւայի ընդունարանը Բաքվի օտար լեզուների ինստիտուտում, որի ռեկտորն է ինքը, միշտ լեցուն է տղամարդկանցով ու կանանցով, որոնք իրենց հետ այստեղ են բերում ամենուր լուծում չգտած խնդիրներ: Սովորաբար դրանք պատասխան են ստանում: Իսկ եթե ոչ, Վերդիեւան զանգահարում է կառավարության անդամներից մեկնումեկին:

Ինչ նախկին ԽՍՀՄ տարածքում սովորական է դարձել գործազրկությունը, որպես կանոն, կանայք առաջինն են կորցնում աշխատատեղը:

«Ադրբեջանում գործազուրկների 80 տոկոսը կանայք են, ասում է նա: *Մենք նրանց սովորեցնում ենք պաշտպանել իրենց շահերը եւ, եթե անհրաժեշտ է, օգնում ենք վերադաստիարակվել»:*

Պատերազմն արդեն հինգերորդ տարին է, ինչ ձգձգվում է, եւ կոմիտեն ձգտում է թեթեւացնել մարդկանց տառապանքները: *«Մեր կառավարությունը պատերազմի պատրաստ չէր,* ասում է Վերդիեւան: *Մենք բարգնում ենք դա»:*

Առավել շատ հակասություններ է հարուցում կոմիտեի պացիֆիստական եռանդը: Պաշտոնապես, ինչպես բոլոր ադրբեջանցիները, կանանց իրավունքների համար պայքարող ակտիվիստուհիները պաշտպանում են պատերազմը, իսկ հաճախ ավելի շատ, քան նրանցից ապասելի է, խոսում են ցավի, հակամարտության անիմաստության մասին:

«Սա ամենաբարբարոսական պատերազմն է, եզրակացնում է Վերդիեւան: *Այն երկու կողմերի կանանց հանդեպ էլ անմարդկային գործողություններով է բնութագրվում: Կանանց օգտագործում են զինտեխնիկան քողարկելու համար, եւ նրանք, ինչպես նաեւ նրանց երեխաները, առաջինն են ընկնում հարվածի տակ»: «Հայերը մեր մեջ տվեցին սադիզմի ու ահաբեկչության օրինակներ: Այժմ այդ բանը մենք ենք անում: Մենք ի վիճակի չենք տղաներին հասկացնել, որ հարկավոր է կանգ առնել. միեւնույն է, մեզ չեն լսի: Ջավակին կորցրած հայուհու ցավը չզգացող ադրբեջանուհին կին չէ, այլ էգ գայլ»:*

«Այս կազմակերպության բոլոր անդամները չէ, որ պացիֆիստուհիներ են: Նրանցից ոմանք ճակատ են տանում զենքով բեռնված ավտոմեքենաներ», պատմեց Էլմիրա Սուլեյմանովան՝ Վերդիեւայի տեղակալը: *Նրանք բեռաններում թույնի արկակ են պահում գերվելուց խուսափելու համար»:*

Ինչպես եւ Ադրբեջանի մյուս ինտելեկտուալները, Վերդիեւան ջանում է իր երկրի վերաբերյալ բացասական կարծիքը չեզոքացնել: Նա ուզում է մահմեդական երկրների առաջադեմ կանանց միավորել ընդդեմ Հայաստանի: *«Մենք,* ասում է նա, *միայնակ չենք կարող բանդել հայկական քարոզչության պատը, իսկ աշխարհի բոլոր կանանց օգնությամբ կարող ենք: Դա կլինի մահմեդական առաջադեմ կանանց միություն: Այն կդիմակայի արմատականությանը»:*

Ադրբեջանում տղամարդկանց կողմից կանանց ծեծվելու հարցը Վերդիեւային ստիպեց ձգվել նույնիսկ արտաքուստ: Նա մերժում է արեւմտյան ռադիոյի մարտական ֆեմինիզմը: *«Եթե կնոջը խփում են, նա լռում է: Ի վերջո, սա Արեւելք է: Մեր կանանց մինչ օրս թվում է, որ եթե ամուսինն իրեն ծեծում է, ուրեմն դեռ սիրում է: Երեւի թե ավելի լավ կլինի չխախտել նրա լռությունը, որովհետեւ հետեւանքը կնոջ համար կարող է նվաստացուցիչ լինել: Եթե սկսեն հրապարակայնորեն քննել խնդիրը, կասեն, թե կինն ընդունակ չէ հասկանալ իր դերը ընտանիքում: Եւ գյուղերում, եւ քաղաքներում ադրբեջանուհիները միասնաբար կարծում են, որ իսլամական արմատականությունը վտանգավոր է»:*

Երբ Այաթոլլա Խոմեյնու դուստրը եկել էր Ադրբեջան՝ արմատականությունը քարոզելու, քաղաքանակ ադրբեջանուհիները հանրահավաքներում ծաղրում էին նրա չադրան:

«Հասած լինելով քաղաքակրթության որոշակի մակարդակի, մենք այլեւս չենք նահանջի, ասում է Վերդիեւան: *Երբ կանանց հրամայեն նստել տանը, մեծ մասը չի ենթարկվի: Նրանք անկախություն եւ աշխատանք են ուզում: Արմատականությունը կվերածվի այստեղ աղտոտ 80 ազգերի միջեւ կրոնական ընդհարման: Եթե տղամարդիկ փորձեն մեզ արմատականություն պարտադրել, թույլ չեն տա: Մենք ավելի շատ ենք, քան նրանք: Եղանակ ստեղծողն էլ մենք ենք»:*

Նրա անկեղծությունը ցնցում է տղամարդկանց: *«Տիկին Վերդիեւա՞ն,* հարցը կրկնեց նախագահ Աբուլֆազ Էլչիբեյը, *այո, նա ամուր ընկույզ է»:*

Հանրահավաքներին շեղ հագնվել նախընտրող Վերդիեւան ներկայանում է իբրեւ «ժողովրդի դուստր»: Կանանց մի քանի կազմակերպություններ փորձեցին նրան համոզել, որ իր թեկնածությունը դնի նախագահի պաշտոնի համար, սակայն նա առայժմ հրաժարվում է:

«Չափազանց շուտ է, հասարակությունը դրա համար դեռ չի հասունացել: Եթե այսօր իմ թեկնածությունը ներկայացնեմ նախագահության համար, տղամարդիկ կվիրավորվեն: Նրանց համար դա կնշանակի, թե այդ աշխատանքի համար ոչ մի տղամարդ ոչինչի չէ: Իսկ ես իհարկե չեմ ուզում, որ նրանք ինձ ատեն: Սակայն ամեն դեպքում եթե կին թեկնածու առաջադրեինք, կարող էինք շահել: Չէ՞ որ կանայք կազմում են երկրի բնակչության կեսը»:

Անհատական զրույցների ժամանակ Վերդիեւան խոստովանում է, որ բավական դժվար է համոզել տարբեր տեսակի կանանց՝ բանվորուհիների, նկարիչների, բժիշկների, լրագրողների միասին աշխատել, նույն հարկի տակ, նույն խնդրի շուրջ: *«Կազմակերպության առումով մենք դեռեւս այնքան էլ ուժեղ չենք»:*

Վերդիեւան համոզված է, որ երկրում կանանց շարժման աղագան լիովին կախված է Արեւմուտքի հետ կապերից: Նրա ամենաբանկ հիշողություններից մեկը վերաբերում է 1965 թվականին, երբ ինքը՝ փոխանակությամբ Ջորջթաունի համալսարան ուղարկված ուսանողուհին, հրավիրվեց սենատոր Ռոբերտ Քենեդու տուն՝ երեկոյի: Աղյուսները նա եւ տանտերն սկսեցին բարեկամություն անել: *«Քենեդին նույնիսկ ստորագրեց եւ ինձ տվեց իր անձնական այցեքարտը: Բայց ես դրանից երբեք չօգտվեցի,* հոյարտորեն ասաց Վերդիեւան: *Այժմ բարեկամներ են իմ դուստրն ու նրա որդին»:*

«Ժողովրդավարության իդեալի վերաբերյալ Քենեդին ինձ շատ բան սովորեցրեց: Անկախ պատերազմից ու արմատականներից, այդ դասը չի մոռացվել»:

We/Мы, *հոկտեմբեր, թիվ 15*

Նախատեսվում է Էլչիբեյի այցը Թուրքիա

Հոկտեմբերի վերջին նախատեսվում է Ադրբեջանի նախագահի պաշտոնական այցը Թուրքիա: Անկարայում կողմերը կստորագրեն մի շարք քաղաքական եւ տնտեսական փաստաթղթեր, որոնք երկու երկրների միջեւ հարաբերությունները կբարձրացնեն նոր աստիճանի:

Այցի ընթացքում նախատեսվում է ստորագրել լայնածավալ մի համաձայնություն՝ համագործակցության եւ կոնսուլտացիաների վերաբերյալ, ինչպես նաեւ ընդունել համատեղ հռչակագիր, որը կհավատի երկու երկրների հավատարմությունը ժողովրդավարությանը, մարդու իրավունքներին, ազատ տնտեսությանը: Ըստ համագործակցության եւ կոնսուլտացիաների համաձայնության, Թուրքիան Ադրբեջանին կօգնի կառավարման պետական կառույցների վերակառուցման գործում: Նախատեսվում է նաեւ տնտեսական փաստաթղթերի ստորագրում երկու երկրների միջեւ արդյունաբերության, առեւտրի, կրթության, ֆինանսների, տրանսպորտի եւ կապի բնագավառներում համագործակցության հետագա արագընթաց զարգացման մասին: «Թուրքիայի եւ Ադրբեջանի միջեւ, գրում է «Միլլիյեթ» թերթը, ստորագրվել է 150 միլիոն դոլլար վարկի վերաբերյալ համաձայնություն, սակայն Թուրքիայի կենտրոնական դրամատան եւ ադրբեջանական բանկի միջեւ համաձայնության բացակայության պատճառով այդ վարկն ամբողջովին չի օգտագործվում: Ադրբեջանին գործնական օգնություն ցուցաբերելու համար օրենսդրական հիմք է անհրաժեշտ: Ուստի Էլչիբեյի այցի ժամանակ կստորագրվի մոտ 20 փաստաթուղթ»: ■

Բախվում բողոքի հանրահավաք

Հոկտեմբերի 13-ին Բաքվում կայացավ նավթային ակադեմիայի ուսանողների հանրահավաք, որի պատճառը օր-օրի վատացող սոցիալական դրությունն է: Ուսանողները իշխանություններից պահանջեցին տասնօրյա ժամկետում ավելացնել կրթաթոշակները երեք անգամ, ապահովել քաղաքային տրանսպորտից ձրի երթեւեկելու իրավունք եւ միջքաղաքային տրանսպորտով կրկնակի անգամ դակատեցնել իրենց երթեւեկության գինը: Ստեղծվել է դասադուլային կոմիտե: Հանրահավաքի մասնակիցները ուղերձ հղեցին հանրապետության նախագահին, Գերագույն խորհրդին եւ ժողկրթության նախարարությանը: Միտինգի հետ իրենց համերաշխությունը հայտնեցին նաեւ պոլիտեխնիկական համալսարանի ուսանողները: ■

Ռուսաստանը Հայաստանում կթողնի 1 դիվիզիա

«Իզվեստիա» թերթի հոկտեմբերի 15-ի համարում տպագրված հարցազրույցում Ռուսաստանի Դաշնության պաշտպանության նախարար Պավել Գրաչովը հայտարարել է, թե Անդրկովկասի զինվորական օկրուգում մինչեւ 1993 թվականի հունվարի 1-ը կկազմավորի ռուսական զորքերի խումբ, որը կվերահսկի ստրատեգիական կարեւորություն ունեցող օբյեկտները: 19-րդ հակաօդային բանակը, բացառությամբ մի քանի զորամասերի, կվերակազմավորվի: Այդպիսով, ռուսական ռազմական ներկայությունը Հայաստանում եւ Վրաստանում կսահմանափակվեն երեք դիվիզիաներով: Երկուսը կտեղակայվեն վրացական Բաթումում եւ Ախալքալակում եւ մեկը՝ հայկական Գյումրիում: Ադրբեջանում եւս կմնա մեկ դետաշնաօդային զորքերի դիվիզիա եւ զենիթ-հրթիռային զորամաս: Այդ զինվորական կազմավորումները, ըստ հանրապետության հետ ունեցած համաձայնության, կմնան մինչեւ 1994 թվականը:

«Արամ Խաչատրյան» Մեծ Համերգասրահ

3-ՐԴ ՀԱՄԵՐԳԱՇՐՋԱՆ

4485-4486 Հայոց Թվական

Երեւանի սիմֆոնիկ նվագախումբ

Գեղարվեստական ղեկավար եւ գլխավոր դիրիժոր՝

ԼՈՐԻՍ ՃԳՆԱՎՈՐՅԱՆ

Համերգաշրջանի խորհրդատու է Հայ Բարեգործական Ընդհանուր Միությունը

Նոր համերգաբար Հայաստանի եւ Սփյուռքի դիրիժորների մասնակցությամբ

18 հոկտեմբեր

Ֆրանչիսկո Մենդելսոն

Նախերգանք «Հեբրիդներ»

Ռոբերտ Շուման

Կոնցերտ դաշնամուրի եւ նվագախմբի համար, լա մինոր (Արեգ Սիմոնյան)

Լյուդվիգ Վան Բեթհովեն

Սիմֆոնիա թիվ 4

Դիրիժոր՝ Նորայր Արման (Կանադա)

Սկիզբը՝ ժամը 14-ին:

Տոմսերը վաճառվում են «Արամ Խաչատրյան» համերգասրահի տոմսարկղում, ամեն օր ժամը 11-18-ը:

digitised by A.R.A.R.@

Եգիպտոսը տնտեսական բարեփոխումների շեմին

Ներածություն Արեւելքի երկրներում կատարվող իրադարձություններին հետեւելու անհրաժեշտության մասին շատ է գրվել: Այդ երկրներում փոփոխությունները Հայաստանի համար ունեն ոչ միայն քաղաքական, այլեւ տնտեսական նշանակություն: Այս առումով հետաքրքրական է նասերական «բմբիրից» համարձակ քայլեր անող այսօրվա Եգիպտոսի օրինակը, որտեղ վերջին շրջանի տնտեսական բարեփոխումները, մեր կարծիքով, ուշադրության կարժանանան ոչ միայն քաղաքական գործիչների կողմից:

Քառասուն տարի անց այն օրից, երբ մի խումբ երիտասարդ սպաներ Գամալ Աբդել Նասերի գլխավորությամբ տապալեցին Ֆարուք բազավորին, Եգիպտոսը կարծես նոր հեղափոխության շեմին է: Նասերի տնտեսական քաղաքականությունը՝ հողի 50-ական թվականների բարեփոխումը, կենտրոնացված պլանավորումը ու ազգայնացումը, այդ տարիներին շատ երկրների համար մոդել էր դարձել: Հետագայում արձանագրվեցին այսպիսի փաստեր, որքան շուտ էին ուրիշ երկրները հրաժարվում նասերական ուղուց, այնքան արագ էր նրանց տնտեսությունը զարգանում: Եգիպտոսն էլ իր հերթին 1970-ականներին կիսաթայլեր արեց դեպի բարեփոխումներ՝ որոշ մարդկանց, այսպես ասած, թույլ տալով հարստանալ, բայց պետությունը արդյունաբերությունը թողեց իր հսկողության տակ:

Հետո եկավ Ծոցի պատերազմը եւ Եգիպտոսի «բարեգործ» դաշնակիցները նրա վրայից հանեցին 50 մլրդ. դոլարի պարտքի գրեթե կեսը: Տնտեսական առումով այս հարմար պահը քաղաքական պատասխանատուները որոշեցին օգտագործել արմատական բարեփոխումների իրականացման համար: Միջազգային վալյուտային հիմնադրամն ու Համաշխարհային բանկը ծանոթացան նրանց ազատականացման ծրագրերին եւ տվեցին իրենց հավանությունը: Ի մեծագույն զարմանս բոլոր մասնագետների, Եգիպտական դրամանիշը բավականին կայուն դուրս եկավ, արժեզրկումը կիսվեց՝ հասնելով 16 տոկոսի, իսկ կառավարության բյուջեի դեֆիցիտն սկսեց հաստատուն տեմպերով նվազել, տեղական խնայողությունները սկսեցին աճել:

Այժմ Եգիպտոսը կառուցվածքային փոփոխությունների շեմին է, որոնցից մի քանիսը, դիտորդների կարծիքով, ցավագին բնույթ կկրեն եւ ծանրորեն կազդեն հասարակության մի հոծ զանգվածի վրա: Մեծ մասամբ դրսից ֆինանսավորվող վառելիքի գները կբարձրանան մինչեւ համաշխարհային մակարդակի: Նոր օրենք է ընդունվել երկարաժամկետ կապիտալի մասին, որը կյանքի կկոչի հարյուրամյա պատմություն ունեցող, բայց մահամերձ Ալեքսանդրիայի եւ Կահիրեի բորսաներին: Հունիս ամսին բարեփոխվեց հողային օրենսդրությունը, որը շրջայում էր ունեւորներին: Ամենամեծ սպասելիքներն ու վախը բաշխված են հենց վերջինիս մեջ:

Եգիպտոսի 2,8 մլն. հերկելի հեկտարները ցրված են փոքր կալվածքներով, որն արգելում էր մեքենաների օգտագործումն ու ընդհանրապես խոշոր չափերով տնտեսական միջամտությունը: 1952 թ. օրենքներով ֆերմերները սահմանափակված էին 20 հեկտարով, վարձը բարձր էր, վարձակալների օրինական փոփոխություններ եւ ժառանգաբար ցկյանս վարձակալությունը՝ սահմանափակված: Մոտ երեք միլիոնի հասնող սեփականատերեր չէին կարող ազատորեն տնօրինել իրենց հողը, իսկ վարձը սահմանված էր յոր անգամ բարձր հողի հարկից: Նոր օրենքով, որի համար խորհրդարանում մեծ կռիվներ եղան, հողի հարկը կբարձրանա մոտ 22 անգամ, 1995 թվականին բոլոր պայմանագրերը պետք է վերանայվեն, եւ այսուհետ սեփականատերերն ազատ կլինեն վաճառել իրենց հողը՝ առանց վարձակալների համաձայնության:

Ավելի երկար ժամանակաշրջանի համար նախատեսված է երկարաժամկետ կապիտալի համար նոր օրենսդրությունը: Այսօր ֆոնդային բորսաները դեռեւս գործում են սահմանափակող միջոցառումների եւ հարկերի անանցանելի մացառուտներում, որոնց «շնորհիվ» ազգային եկամտի մեջ ընդհանուր գործարքների տեսակարար կշիռը 1950 թվի 9 տոկոսի համեմատ 1980-ականների վերջերին նվազեց մինչեւ 0,4 տոկոս: Գրանցված 627 ընկերություններից միայն քառորդն են հասարակության բաժնեթղթերի համար բաց եւ միայն քսանն են, որ ակտիվ առեւտուր են անում:

Նոր օրենքը վերացնում է գրեթե բոլոր հարկերը եւ շատ ուրիշ սահմանափակումներ: Այն թույլ է տալիս շատ օտարերկրյա ընկերությունների գրանցվել, չնայած վերջիններիս վրա պահպանված որոշ սահմանափակումներն ու հարկերը, ըստ մասնագետների, կխանգարեն Եգիպտոսի բորսաներին դառնալ միջազգային: Դիտորդներն սպասում են նաեւ փոխատվությունների բաց թողնման ծավալի մեծացմանը:

Եղել են գործարքների առաջարկներ, որոնք կարող են շատ արագ հնգապատկել բորսաների տարեկան 800 մլն. եգիպտական ֆունտի ընթացիկ մակարդակը մինչեւ 4 մլրդ. ֆունտի (1,2 մլրդ. դոլար): Բորսաների կարեւորությունը կաճի կառավարության կողմից սեփականաշնորհման ծրագրերի իրագործմանը զուգահեռ:

Սեփականաշնորհվող գույքը գնահատվում է մոտ 45 մլրդ. դոլար: Օրակարգում հաջորդը աշխատանքային օրենքի բարեփոխումն է եւ քաղաքացիությունը վերահսկող օրենքը: Ներկա հարկի այլանդակություններն են պատճառը, որ միեւնույն բնակարանը կարող է արժենալ կամ 10 դոլար, կամ՝ 2000: Առեւտրի բնագավառում ,եղած բավականին կրճատված սահմանափակումներն ավելի ժամանակակից տեսք են ստանում:

Բարեփոխումները մեծ նշանակություն ունեն Եգիպտոսի համար, բայց դրանցից մի քանիսը, շատ սուր սոցիալական ցավ կպատճառեն: Օրինակ, գործածելով հողային բարեփոխումը, վարձակալներից շատերին կառավարությունը կհրի դեպի արդեն բազմաթանակ գործազուրկների, տնազուրկների եւ զայրացածների շարքերը: Եւ իհարկե ոչ բոլոր փոփոխություններն են նախորդներից լավ: Նույնիսկ Նասերի տարիների վաս օրերին կառավարությունն իր բյուջեի 22 տոկոսը ծախսում էր ուսման վրա. այսօր այդ հարաբերությունը ընդամենը 6 տոկոս է:

Բայց ինչպես ասում են, ամեն մի նորի ծնունդ առանց ցավի չի լինում: Ըստ հարցումների, եգիպտացիների մեծ մասն առայժմ պաշտպանում է իշխանությունների դեպի տնտեսության ազգայնացմանն ուղղված քայլերը: Թե ինչ կստացվի արդյունքում, ցույց կտա ժամանակը, մանավանդ, որ արեւելագետների կարծիքով, Եգիպտոսը դեռեւս բավական խոցելի է իսլամական արմատականության կողմից:

Ըստ արաբական մամուլի պատրաստեց
ՍԱՐՄԵՆ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԸ

Բանակցություններ ալբանական ճգնաժամի կապակցությամբ

BBC ռադիոկայանը հաղորդում է, թե Կոսովոյի վարչական կենտրոն Պրիշտինայում եռակողմ բանակցություններ են սկսվել ալբանացիների, Սերբիայի իշխանությունների եւ նոր Հարավսլավիայի ֆեդերալ ղեկավարության միջեւ՝ հարթելու այն հակասությունները, որ Կոսովոյում վերջին զանգվածային հուզումների պատճառն են դարձել: Դիտորդները մտավախություն են հայտնում, թե այդ բանակցություններում հերթական անգամ կընդհարվեն սերբական եւ ֆեդերալ իշխանությունների տեսակետները, ինչը կարող է խափանել աշխատանքները:

Հրեաները ճնշում են գործադրում Գերմանիայի վրա

BBC ռադիոկայանի թղթակիցը Բոննից հաղորդեց, թե հանդիպում է տեղի ունեցել Գերմանիայի կանցլեր Հելմուտ Քոլի եւ այդ երկրում հրեական համայնքի ղեկավարի միջեւ, որի ընթացքում հրեական ղեկավարն իր համայնքի անհանգստությունն է հայտնել ազգայնական ալիքի աճի կապակցությամբ: Հրեա ղեկավարը նշել է, թե օտարերկրացիների դեմ կիրառվող բռնություններն սպառնում են գերմանական ժողովրդավարության հիմքերին, ուստի իշխանությունները պարտավոր են ամենախիստ միջոցները կիրառել ազգայնական ընդվզումները սանձելու համար: Կանցլեր Քոլը համաձայնել է ներկայացված տեսակետների հետ եւ հավաստիացրել, որ կառավարությունը կձեռնարկի բոլոր անհրաժեշտ միջոցառումները երկրում հասարակական համերաշխությունը ապահովելու եւ ազգային փոքրամասնությունների իրավունքները պաշտպանելու ուղղությամբ:

Արդյոք պաղեստինցիները կիպատակագրվե՞ն

Լիբանանում բուռն բանավեճ է առաջացրել մամուլի էջերում հայտնված այն լուրը, թե երկրում սպասվում է պաղեստինցի փախստականների հնարավոր հոգատակագրություն: Հանգստությունը վրդովել էր Լիբանանի շիա համայնքի հոգեւոր առաջնորդ շեյխ Մոհամեդ Մահդի Շամսեդինը, որը վերջերս Մեծ Բրիտանիա այցելության ժամանակ հայտարարեց, թե *«երկրում պաղեստինցիների տարաբնակեցումը լուծված հարց է»*: Նրա խոսքերով, *«դա կատարված փաստ է, ուստի անհրաժեշտ է ճանաչել պաղեստինյան համայնքը այնպես, ինչպես դա ժամանակին կատարվեց հայկական համայնքի հետ»*: Պաղեստինցիների հոգատակագրման վերաբերյալ բանակցությունները, որոնք Լիբանանում են առաստանել 40 տարի առաջ, 1948-1949 թվականներին արաբ-իսրայելական առաջին պատերազմից հետո, ընդգծեց Շեյխը, տարվել են եւ տարվում են մշտապես: Դրանց արդյունքը վաղորդա հայտնի է, սակայն մինչեւ դա հայտարարելը, շեյխի կարծիքով, անհրաժեշտ է հաղթահարել մի շարք հոգեբանական գործոններ: Այդ կապակցությամբ Մ. Շամսեդինը կոչ արեց դադարեցնել պայքարը Լիբանանում պաղեստինցիների հոգատակագրվելու դեմ եւ ճանաչել նրանց որպես իրավահավասար համայնք:

Մեկնաբանելով շիա հոգեւոր առաջնորդի հայտարարությունը, Լիբանանում Պաղեստինի ազատագրման կազմակերպության ներկայացուցիչ Շաֆիկ ալ-Հուսը հայտնեց, թե պաղեստինցիները երբեք հարց չեն դրել երկրում իրենց հոգատակագրման վերաբերյալ, այլ *«պահանջում են իրենց քաղաքացիական եւ սոցիալական իրավունքների պաշտպանությունը»*: Իր կողմից, Լիբանանում պաղեստինյան փախստականներին օգնության եւ աշխատանքների կազմակերպման ՄԱԿ-ի մերձավորարեւելյան գործակալության ներկայացուցչության տնօրեն Հիլքեր Սերվերան անցյալ շաբաթ մամուլի ասուլիսում հայտնեց, թե այս տարվա ամռանը կատարված պաղեստինցիների մարդահամարը Լիբանանում նպաստակ ուներ ճշտել նրանց թիվը երկրում, որպեսզի ՄԱԿ-ի կողմից օգնության անհրաժեշտ ծավալը: Համաձայն Հ. Սերվերայի տվյալների, ներկայումս Լիբանանում կա 317 հազար պաղեստինցի փախստական, որի 53 տոկոսը կենտրոնացված է երկրի տարբեր շրջաններում ստեղծված փախստականների 12 ճամբարներում: Մնացյալները բնակվում են Լիբանանի քաղաքներում եւ գյուղերում: Գործակալության ներկայացուցիչը նշեց, թե փախստականների եւ նրանց հետնորդների մեծ մասն *«իրեն համարում է ավելի շատ լիբանանցի, քան պաղեստինցի»*:

Լիբանանում պաղեստինցիների հոգատակագրությանը կասկածամտորեն վերաբերվեց ՊԱԿ-ի ղեկավարությունը: Պաղեստինյան կենտրոնական կազմակերպության պաշտոնական ներկայացուցիչն այդ գործողությունները գնահատեց որպես մի փորձ պաղեստինցիներին զրկելու իրենց պատմական հայրենիք վերադառնալու իրավունքից, որը ճանաչված է ՄԱԿ-ի բանաձեւերով:

Պաղեստինցիների հնարավոր հոգատակագրության մասին հաղորդումը բացասաբար ընդունվեց Լիբանանի քրիստոնյա համայնքում: Նրա բազմաթիվ ներկայացուցիչները մինչեւ հիմա զսնում են, թե պաղեստինյան ճակատներն ու կազմակերպություններն էին Լիբանանում արյունալի քաղաքացիական պատերազմ սկսելու հիմնական մեղավորները: Պատերազմ, որ տեւեց 16 տարի: Քրիստոնյաների ճանաչված ղեկավար Բուտրոս Հարբը հայտարարեց «հոգատակագրության նախագծի» անթույլատրելիության մասին, որը սպառնում է լիբանանյան ազգային ինքնությանը:

Չգտնելով հանգստացնել հասարակայնությանը, Լիբանանի վարչապետը կառավարական հեռուստատեսությամբ լրիվ բացառեց երկրում պաղեստինցիների տարաբնակեցման հնարավորությունը: ■

Հյուսամեթքին Ջինդորուֆ. «Թուրքիան չի ընդունի երկրի դաշնակցային կառուցվածքը»

Թուրքիայի խորհրդարանի նախագահ Հյուսամեթքին Ջինդորուքն անհմաստ անվանեց երկրի պետական կառուցվածքը դաշնակցայինի վերափոխելու գաղափարը: «Թրքիշ դեյլի նյուզ» թերթին տված հարցազրույցում նա նշեց, թե ով կողմ է դրան, նա չգիտի միացյալ պետության եւ դաշնության միջեւ եղած տարբերությունը: Թուրքական պետությունը չի ստեղծվել մի ժողովրդի՝ մյուսի նկատմամբ տարած հաղթանակի արդյունքում: Այն հիմնվել է բոլորի համաձայնությամբ:

Քրդերեն լեզվով հեռուստատեսության եւ կրթության հնարավորության մասին հարցին Ջինդորուքը պատասխանեց, թե Թուրքիայում վերացվում է պետության միահեծանությունը հեռուստատեսության եւ ռադիոյի նկատմամբ, ուստի այդ հարցը կարելի է լուծել մասնավոր հաստվածի խողովակով: Թուրքիայում քրդական լեզվի նկատմամբ արգելք չկա: *«Եթե չլիներ ահաբեկչությունը, որն իրագործվում է շարագործների կողմից, գուցե այդ խնդիրն արդեն լուծված լիներ, ինչպես շատ ուրիշներ»*: Շրջանում մշտապես տեղի են ունենում ընդհարումներ, եւ քրդերենով պետական ռադիոհաղորդումը ներկա պայմաններում հարցականի տակ է, շարունակեց նա:

Քրդական բանվորական կուսակցության (PKK) եւ ժողովրդի միջեւ բշնամություն գոյություն ունի, ժողովուրդը պետությանը խնդրում է իրեն պաշտպանել PKK-ից, նշեց թուրքական խորհրդարանի նախագահը: Աշխատանքի ժողովրդական կուսակցությանը, ասաց նա, հարավ-արեւելքում համակրում է չնչին խումբ: Ժողովրդական աշխատանքի կուսակցության պատգամավորները վախենում են PKK-ից, որովհետեւ նրանք բավականին ունեցվածք եւ հարազատներ ունեն շրջանում: Հ. Ջինդորուքը քննադատեց Աշխատանքի ժողովրդական կուսակցության որոշումը PKK ղեկավար Աբդուլլահ Օջալանի հետ հանդիպման մասին: *«Մի կուսակցություն, որը համարձակվել է զրուցել սարերում շարագործի հետ*, ընդգծեց նա, *չի կարող իր վրայից մաքրել այդ խայտառակությունը»*: Խորհրդարանի ղեկավարի կարծիքով, Օջալանը *«կորցրել է իր ազգային պատկանելությունը, գործելով այլ երկրների թելադրանքով»*: ■

Իրան-Սաուդյան Արաբիա. մերձեցման փորձեր

Հոկտեմբերի 13-ին Իրանի նախագահ Հաշեմի Ռաֆսանջանին Սաուդյան Արաբիայի Ֆահդ թագավորին մի նամակ հղեց, որը վերջինիս հանձնեց Սաուդիայում Իրանի դեսպան Մուհամմադ Հադին: Քաղաքական դիտորդներն այս նամակը վերագրում են Իրան-Ծոց կապերի վերակարգավորման ջանքերին: Իրանի կառավարությանը մոտ աղբյուրները նշում են, թե նամակը բովանդակում է նոր մտքեր Ծոցի շրջանում անվտանգության իրավիճակի շուրջ՝ կապված տեղական վեճերի համար պատշաճ ուղիներ գտնելու հետ: Դա կկատարվի այն ժամանակ, երբ կվերականգնվեն բազմակողմանի եւ միակողմանի երկխոսությունները ու անմիջական բանակցությունները: Եվ եթե Թեհրանում ոմանք կարծում են, թե նախկինում Սաուդիայի արձագանքները Իրանի կարգավորման ջանքերի նկատմամբ թույլ էին, որի պատճառով մի քանի անգամ ծգծգվել էր Ֆահդ-Ռաֆսանջանի գագաթաժողովը, ապա այս նամակը կարող է լինել այն քայլը, որի շնորհիվ կաշխուժանան Թեհրան-Էլ-Ռիադ հարաբերությունները: Երկու երկրների միջեւ հարաբերությունները սառել էին, երբ Իրանի արտգործնախարարն անցյալ տարի Սաուդիա այցելելով՝ Թեհրան այցելելու պատշաճական հրավեր էր ներկայացրել Սաուդիայի թագավորին: Այս ընթացքում Թեհրանը փորձում է իր կապերն ամրապնդել Ծոցի արաբական մյուս պետությունների հետ: Դիտորդներից ոմանք էլ այն համոզմունքն ունեն, թե կողմերի շուրջ վերջերս վերսկսված ճգնաժամը գուցե դառնա այն դուռը, որով կընթանա Թեհրանի եւ Էլ-Ռիադի միջեւ կարգավորման գործընթացը, որը կիրագործվի Սաուդիայի արտգործնախարար Սաուդ Ալ-Ֆայսալի՝ Թեհրան այցից հետո:

digitised by A.R.A.R.@

Վրաստանում ստեղծվել է Պաշտպանության պետական խորհուրդ

Վրաստանի Պետխորհուրդը որոշում է ընդունել ստեղծել պաշտպանության պետական խորհուրդ: Նրա կազմում կընդգրկվեն խորհրդարանի նախագահը, վարչապետը, պաշտպանության, ներքին եւ արտաքին գործերի նախարարները, տեղեկատվական-հետախուզական ծառայության ղեկավարը, գլխավոր դատախազը եւ գլխավոր շտաբի պետը: Պաշտպանության պետական խորհրդի որոշումները պարտադիր են բոլոր քաղաքացիների եւ կազմակերպությունների համար: Պաշտպանության պետական խորհուրդը պետք է հաստատվի Վրաստանի նոր խորհրդարանի կողմից:

ՆԱՏՕ-ն հուսադրում է Մոլդովային

Մոլդովայի նախագահի պետական խորհրդական Նիկոլաե Կիրսոակեն հայտարարեց, թե ՆԱՏՕ-ի դաշտիրակության այցի արդյունքում Մոլդովայի ղեկավարությունը համոզվեց «Մոլդովայի արեւելյան շրջաններում միջազգային իրավունքի նորմերին համապատասխան խաղաղական միջոցներով իրավիճակի կարգավորման մեջ»: Պետական խորհրդականը համոզված է, որ ՆԱՏՕ-ի պատշտիրակության այցը «դական դեր կխաղա Պրիդնեստրովիեի հարցի բոլոր կողմերի համար ընդունելի լուծում գտնելու գործընթացի համար»:

Թուրքիան սեփական զենքով ապահովված

Թուրքիան իր զինված ուժերի համար արտադրում է անհրաժեշտ ամեն ինչ, սկսած սուզանավերից մինչեւ տարբեր տեսակի զինամթերք: Այդ մասին, ինչպես հաղորդեց Անատոլիական գործակալությունը, հայտարարել է երկրի վարչապետ Սուլեյման Դեմիրելը: Ասուլիսին մասնակցում էին գլխավոր շտաբի պետ, բանակային գեներալ Դողան Գյուրեշը եւ ազգային պաշտպանության նախարար Նեւզաթ Այազը: Թուրքական կառավարության ղեկավարը հայտնել է, թե նիստի ընթացքում որոշում է ընդունվել կատարելագործել F-16, F-4 եւ F-5 ինքնաթիռները եւ արտադրել սեփական մարտական ուղղաթիռներ: Դեմիրելը նշել է, թե պաշտպանության բնագավառում երկրի կախվածությունը արտասահմանյան մատակարարումից ստրատեգիական վտանգ է: Թուրքական պաշտպանության արդյունաբերությունը կարող է իր արտադրանքը արտահանել ափխարհի այլ երկրներ: «Մեր արտադրանքը կարող է արտահանվել նույնիսկ Ամերիկա, եւ այդ ուղղությամբ արդեն ձեռնարկվում են որոշակի քայլեր», ասել է Դեմիրելը:

Ամմանում շարունակվում է ԻԱԵ-ի դատավարությունը

Հոկտեմբերի 12-ին Ամմանում պետական անվտանգության դատարանը շարունակում էր քննարկել Իսլամական ափխարհագործի երիտասարդներ (ԻԱԵ) խմբավորման հարցը: Նույն օրը դատական մարմինները լսեցին հեռախոսային զրույցների 11 ձայներիզներ, որոնցում ձայնագրվել էին իսլամական պատգամավորներ Լեյս Շբելաթի եւ Յաղուբ Կարաշի խոսակցությունները: Այդ ժապավեններից մեկը բացահայտեց, որ Շբելաթը նշյալ արմատական ցանցի ղեկավարն է, իսկ Կարաշը՝ գլխավոր քարտուղարի տեղակալը: Պարզվեց, որ վերոհիշյալ երկու պատգամավորները կապեր են հաստատել արտասահմանում գտնվող հրաչյան ընդդիմության հետ: Նույն ձայնագրությունից առանձնապես հաստատվեց նաեւ, որ Կարաշն աշխատում է հոգուս Իրանի՝ Իրաքի նախագահ Սադդամ Հուսեյնին տապալելու նպատակով:

Շերտավորում

Այն, ինչ կատարվում է հասարակության հետ, մի բառով կարելի է անվանել շերտավորում: Յոթանասուն տարիների ընթացքում համառորեն մեր գիտակցության մեջ խցկված անդասակարգ հասարակության մասին գաղափարը, որը փուլ եկավ ողջ կայսրության կործանումից հետո, անմիջապես դարձավ իր իսկ հակառակերը: Սկսվեց հասարակության դասակարգային շերտավորման շտապողական եւ անդառնալի երեւույթը: Այս երեւույթի մեջ նկատելի են երկու բնորոշ ախտանիշներ: Մեկը գնալով ավելի մասնատվող դասակարգությունն է, երբ դասակարգերը ոչ միայն սոցիալ-տնտեսապես, այլեւ քաղաքականապես են խզված, իսկ երբեմն էլ հակադիր ու բշնամական են միմյանց հանդեպ: Մյուս ախտանշանը տարեւոյնությունն է, ողջ երեւույթի ընթացքի անկանխագուշակելիությունը: Ըստ էության, դա երեւույթ էլ չի կարելի համարել, քանի որ երեւույթը սովորաբար ենթադրում է որոշակի ուղղվածություն, իսկ այն, ինչ կատարվում է մեր աչքի առջեւ, ավելի շուտ սոցիալական ահռելի «գիտափորձի վիճակ է, որն իր նման տեսով վերջ չի ենթադրում»:

Շուկայի նման, որը շատերին երջանիկ դարձրեց, թեեւ հասարակության հիմնական մասին խորապես աղերջանկացրեց, դասակարգային շերտավորումը առաջին հերթին հասարակությունը բաժանեց homo faber (գործող մարդ), homo novus (նորելուկ մարդ) եւ homo sapiens (բանական մարդ) տիպերի: Իհարկե, այստեղ խոսքը ոչ թե երեք դասակարգերի, այլ երեք տեսակների մասին է, որոնք այս «հեսվերակառուցման» շրջանում ձեւավորեցին իրենց դասակարգերը, ենթադասակարգերը, ենթատեսակները եւ այլն:

Յուրաքանչյուր տեսակի յուրահատկություններ վերլուծելու տեղը չէ: Առավել հետաքրքիր է մեկ այլ հարց՝ իրականում ի՞նչ է տեղի ունենում գիտության, մշակույթի բնագավառի մարդկանց հետ, որոնց շրջանցելով անվանում ենք այժմ ժամանակավրեպ դարձած «մտավորականություն» անդեմ բառով: Պահպանե՞լ է արդյոք այդ մտավորականությունն իր homo sapiens-ի կարգավիճակը, թե ոչ: Արդեն պարզ է, որ ոչ: Այժմ որոշակի երեւում է, որ մտավորականությունն ասիճանաբար մանրանում, արժեզրկվում է, ցուցաբերում տհմական հակումներ, որովհետեւ կորցնում է «բանական մարդու» տեսակը, քանի որ միտքը դադարում է հասարակության մեջ արժեքակիր լինել:

Մտքի արժեզրկումը նկատում է միայն նա, ում այն տրված է, դրա համար էլ դա արտաքնապես առայժմ չի դիտվում իբրեւ ազգային աղետ: Այնուամենայնիվ, հետեւանքները անսպասելի են:

Ի՞նչ անի homo sapiens-ը, եթե նրա միտքը, արվեստը, ստեղծագործությունը վաճառաշուկա չունի: Նա իր առջեւ ունի երեք ելք. 1) անցնել homo faber-ի դասակարգը, 2) դառնալ homo novus, 3) հնազանդվել, ընտրել սպասողական, անգործունյա դիրք:

Հասկանալի է, որ նման ելքերը կարող են հաստատագրվել միայն որոշ մարդկանց, սակայն ոչ ամբողջական դասակարգային տեսակի: Տեսակը հո չի՞ կարող վերանալ անկախ այն ընդգրկող քայքայումից ու զարգացման հեռանկարների բացակայությունից, անկախ իր փոքրաքանակությունից, սասկացող անտարբերությունից եւ ներքին շերտավորումից, անկախ այն բանից, որ հասարակությանը (եւ պետությանը նույնպես) այժմ հարկավոր են «գործարարներ», այլ ոչ թե փիլիսոփայող եւ խղճի գերի համլետներ, չնայած որ այս աշխարհում, ինչպես իր կինոնկարում անվանել է Անջեյ Վայդան, «Ամեն ինչ ծախու է», կան բաներ, որոնք ոչ կարելի է ծախել, ոչ հաշվել, ոչ էլ չափել: Դա ոգու մատերիան է: Այն պետք է կարողանալ պահպանել աղագայի համար, բաքցնել իրականության անհեթեթությունից, ինչպես մեր նախնիներն են սերունդների համար հրդեհներից ու պատերազմներից փրկել մեր մատենները ու գրքերը:

Հասարակությունը նպատակամղված շերտավորվում է: Եւ homo sapiens-ի դասակարգը նույնպես: Տխուր է, բայց փաստ: Ցավով եւ հույսով եմ դիմում ոգու ընկերներին՝ մի հուսահատվեք, մի ընկճվեք եւ պահպանեք ոգին, քանի որ պահպանողը կգտնի այն:

ՍՎԵՏԼԱՆԱ ՍԱՐԳՍՅԱՆ
Երաժշտագետ

Դաշնակահար Վարդան Մամիկոնյանի առաջին սկավառակը

Երեւանում ծնված, այստեղ եւ Մոսկվայում երաժշտական կրթություն ստացած Վարդան Մամիկոնյանը, որ արդեն մի քանի տարի բնակվում է Փարիզում եւ վարում հագեցած ստեղծագործական կյանք, բողարկեց իր առաջին սկավառակը: Այն ընդգրկում է Մորիս Ռավելի *Գիշերային Գասպարը*, որի փայլուն կատարումը հիացրել է մասնագետներին, Պյոտր Չայկովսկու *Թեմաներ եւ Վարիացիաները*, Արամ Խաչատրյանի *Տոկատան* եւ այլ գործեր: «*Նրա նվագը*, գրում է ֆրանսիական «Լը Մոնդ» թերթի երաժշտական քննադատ Ալեն Լոմոեը, *ճառագող գեղեցկություն ունի: Նրա նուրբ, շնորհագեղ կատարումները վկայում են երաժշտի խոր ընկալումը*»: Վարդան Մամիկոնյանը 1990 թ. Փարիզում նվաճեց *Իվոն Լրֆեբյուր* մրցանակը, իսկ այս տարվա հունիսին *Դաշնակի Վարպետներ* հեղինակավոր մրցանակը Մոնակոյում: 22-ամյա Վարդանն այժմ Իտալիայում աշակերտում է Լազար Բերմանին:

Հիշեցնենք, որ մեր թերթը տաղանդավոր մեր երիտասարդ հայրենակցի մասին ծավալուն հոդված էր հրապարակել այս տարվա օգոստոսի 4-ին: ■

ՄԱՐԶԱԿԱՆ ՄԱՐԶԱԿԱՆ ՄԱՐԶԱԿԱՆ

Աշխարհի գավաթի համար

Եվրոպական 6 խմբերում տեղի ունեցան ֆուտբոլի աշխարհի 1994 թ. առաջնության ընտրական հերթական հանդիպումները:

1-ին խումբ

Շոտլանդիա - Պորտուգալիա՝ 0:0

Իտալիա - Շվեյցարիա՝ 2:2

Այս խաղում անակնկալ էր հասունանում: Շվեյցարացիներն ուժեղ մրցակցին նրա իսկ դաշտում հաղթում էին 2:0 հաշվով, սակայն վերջին 7 րոպեի ընթացքում իտալացիները կարողացան փրկել խաղը:

Շվեյցարիայի հավաքականը 3 խաղերում վաստակել է 5 միավոր:

2-րդ խումբ

Անգլիա - Նորվեգիա՝ 1:1

Հոլանդիա - Լեհաստան՝ 2:2

Նորվեգացիները մեծ անակնկալի հեղինակ են: 4 խաղում նրանք կորցրել են ընդհանքնը մեկ միավոր:

3-րդ խումբ

Հյուսիսային Իռլանդիա - Իսպանիա՝ 0:0

Դանիա - Իռլանդիա՝ 0:0

Այս խմբում առաջատարների մեջ է նաեւ Լիտվայի հավաքականը:

4-րդ խումբ

Կիպրոս - Ուելս՝ 0:1

Բելգիա - Ռումինիա՝ 1:0

5-րդ խումբ

Ռուսաստան - Իսլանդիա՝ 1:0

6-րդ խումբ

Ֆրանսիա - Ավստրիա՝ 2:0:

ՄԱՐԶԱԿԱՆ ՄԱՐԶԱԿԱՆ ՄԱՐԶԱԿԱՆ ՄԱՐԶԱԿԱՆ

Ֆիշերին չհաջողվեց իրացնել առավելությունը

Ֆիշեր-Սպասկի մրցամարտի 19-րդ պարտիան ամենատեւականն էր: Կողմերը շախմատի տախտակի մոտ անընդմեջ անցկացրին 9 ժամ: Կատարվեց 84 քայլ: Սեւերով խաղացող Սպասկին կրկին ընտրեց սիցիլիական պաշտպանությունը:

Ֆիշերը նախընտրեց դրա փակ տարբերակը եւ 30-րդ քայլում զոհաբերելով որակ, լիովին տիրեց նախաձեռնությանը: Կար մի պահ, երբ Ֆիշերը երկու զինվորի առավելություն ուներ եւ թվում էր կտոնի հերթական հաղթանակը: Սակայն ամերիկացի գրոսմայստերը ոչ միշտ էր ճիշտ գործում: 45-րդ քայլում նա կորցրեց անցողիկ ուժեղ զինվորը եւ չնայած համառորեն շարունակում էր հաղթանակի ուղիներ փնտրել, այդպես էլ չգտավ:

Պարտիան խաղաղ ելք ունեցավ:

«Ես կարող էի հետքությամբ շահել այդ հանդիպումը, բայց ի վերջո խոճվեցի», պարտիայից հետո խոստովանեց Ֆիշերը:

Հաշիվը մնաց անփոփոխ: Կրկին 7:3 հաշվով առջեւում է Ֆիշերը: ■

ՖԻՇԵՐ-ՍՊԱՍԿԻ
19-րդ պարտիա
Սիցիլիական պաշտպանություն



_ 30.ն:e5 de 31. փ: e5 Ցe7 32. d6 ն:d6 33. փ:d6 Ց:d6 34. փd5+ Սf8 35. Ց:a7 ձe7 36. Ցa8+ Սg7 37. Ցb7 Սf8 38.a4 f4 39. a5 fg 40. a6 Ցf4 41. փf3 ձf5 42. Ցe4 g2 43. Ց:f4 g1Ց 44. փe4 Ցa1 45. a7 Ց:a7 46. փ:f5 gf 47. Ց:f5+ Սg7 48. Ցg5+ Սf8 49. Ցh6+ Սg8 50. Ց:h5 Ցc7 51. Ցg6+ Սh8 52. Ցf6+ Սg8 53. Ցe6+Սh8 54. Ցd5 Ցf7 55. Սg2 Ցg6+ 56. Սh3 Ցf7 57. Ցe5+ Սh7 58. Սg4 Ցg6+ 59. Սf4 Ցh6+ 60. Սf3 Ցg6 61. Ցe4 Սh8 62.Սe2 Ցd6 63.Ցe3 Ցh2+ 64. Սd1 Ցh1+ 65. Սd2 Ցh2+ 66. Սc3 Ց:h4 67. d4 Սh7 68. d5 Ցf6+ 69. Սc2 Ցd6 70. Ցg5 Սh8 71. Սd2 Ցb6 72. Ցe5+ Սg8 73. Ցe8+ Սg7 74. Ցb5 Ցc7 75. Սc2 Սf8 76. Ցa6 Ցh2+ 77. Սb3 Ցb8+ 78. Ցb5 Ցc7 79. Սa3 Ցa7+ 80. Սb3 Սe7 81. Սc2 Սd8 82. Սd2 Ցc7 83. Ցa6 Ցf4+ 84. Սc2 Ցe4+, ոչ ոքի: ■

Շախմատի կանանց ՀՀ առաջնություն

Զեմոիոնուիին գրեթե հայտնի է

Այսօր կավարտվի հանրապետության առաջնությունը: Հանգուցալուծումը տեղի ունեցավ նախավերջին տուրում, երբ երկու առաջատարներից մեկը՝ Գոհար Հլղաթյանը զիջեց կրտսեր Շուշանիկ Հայրապետյանին, իսկ մյուսը՝ Լյուդմիլա Ասլանյանը հաղթեց Ասրիյանին:

Այսօր կայանալիք եզրափակիչ տուրից առաջ միջազգային վարպետ Ասլանյանը մեկ միավոր ավելի ունի, քան երկրորդ տեղում ընթացող Հլղաթյանը: Նա 11 հնարավորից վաստակել է 8,5 միավոր: Կարելի է ասել չեմոիոնուիու հարցը գործնականում լուծված է: Այսօր կայանալիք Անդրեասյանի հետ վերջին պարտիայում Ասլանյանին բավարարում է նույնիսկ կես միավորը, իսկ Հլղաթյանը, որը մրցելու է ավագ Շուշանիկ Հայրապետյանի հետ, միայն հաղթանակի դեպքում կարող է տեսական հույսեր պահպանել: ■

Դանիելյանները կրկին մեկնարկեցին

Երեկ Արգենտինայում մեկնարկեց մինչեւ 20 տարեկան շախմատիստների համաշխարհային առաջնությունը, որին մասնակցում են նաեւ Հայաստանի պատվիրակները: Պատանիների մրցաշարում ելույթ է ունենում վարպետ Հովիկ Դանիելյանը, աղջիկների մրցաշարում՝ Հայաստանի օլիմպիական հավաքականի անդամ Էլինա Դանիելյանը: Ընդգծենք, որ Էլինայի ելույթը հովանավորում են արգենտինահայ գաղութի ներկայացուցիչները:

Այս տարի Դանիելյանների համար սա աշխարհի... երկրորդ առաջնությունն է, ընդ որում, նրանց նորամուտը Գերմանիայում անցկացված տարիքային ավելի փոքր խմբերի մրցաշարում ոչակվեց փայլուն հաղթանակներով: Էլինան նվաճեց աշխարհի մինչեւ 14 տարեկան աղջիկների չեմպիոնուհու տիտղոսը, իսկ Հովիկը դարձավ երկրորդ մրցանակակիրը մինչեւ 18 տարեկան պատանիների մեջ: Աշխարհի առաջնությունն կտեւի մինչեւ հոկտեմբերի 28-ը:

Գ. Հ.

Նոր զույգեր

Թիլբուրգի հնգաստիճ շախմատային ներկայացուցչական մրցաշարի 1/32-րդ եզրափակիչում մեր գրոսմայստերական եռյակի հետ միասին աստղաբազը թողեցին այնպիսի անվանի շախմատիստներ, ինչպիսիք են Անատոլի Կարպովը, Ալեքսանդր Բելյավսկին, Բորիս Գուլկոն, Լեւ Պոլուգաեւսկին, Միխայիլ Գուրեւիչը, Զոնաթան Սփիլմենը, Յան Էլվեսը եւ ուրիշներ:

1/16-րդ եզրափակիչում ըստ վիճակահանության մրցում են Լոյեն ու Իվանչուկը, Սեյրավանն ու Անդերսոնը, Վինանսսն ու Կամսկին, Յուսուպովն ու Դրեեը, Շտոլն ու Գելֆանդը, Կենգիսն ու Ռոդեն, Կորչնոյն ու Պիկեսը, Անանդն ու Տիվյակովը, Վիժմանավինն ու Շիրովը, Նիկոլիչն ու Նոգեյրասը, Կոստեն ու Սմիրինը, Շորսն ու Պետուրսոնը, Սմիսլովն ու Սերոթերը, Թիմանն ու Սվեշնիկովը, Գեորգիեւն ու Աղամսը, Չերնինն ու Կովալովը: ■

Բաժինը վարում է Սուրեն ԲԱԴԱՍԱՐՅԱՆԸ

digitised by A.R.A.R.@

Գողություն Հայաստանի ոստիկան պատկերասրահից

Երեկ տեղեկացանք, որ Հայաստանի ոստիկան պատկերասրահից գողացվել է մեծարժեք մի ստեղծագործություն՝ 17-րդ դարի հոլանդացի նկարիչ Ֆրանս Վան Միրիսին վերագրվող «Գայթակղում» նկարը (22x28, փայտ, յուղաներկ): Սղանդարյանի շրջանի միլիցիայի ավագ քննիչ պրն. Թումաղայանը, որը վարում է գործը, չցանկացավ մանրամասնություններ հայտնել՝ պատճառաբանելով, որ իրավունք չունի դա անել առանց վերադասի համաձայնության, մանավանդ որ մամուլի հրաղարակումները կարող են վնասել հետաքննությանը:

Քանի որ եւ պատկերասրահի տնօրեն Շահեն Խաչատրյանը, եւ նրա տեղակալը ներկայումս գտնվում են արտասահմանում, տեղեկություններ ստանալու համար դիմեցինք պատկերասրահի պատասխանատու աշխատակից պրն. Մելիքոնյանին, որն էլ հայտնեց, թե գողությունը տեղի է ունեցել հոկտեմբերի 13-ին, ժամը 14-ի մոտակայքում, պատկերասրահի 7-րդ հարկի ցուցասրահից: Գողը (կամ գողերը), օգտվելով սրահի աշխատակցուհու կարճատեւ բացակայությունից, հասցրել է ոչ միայն շրջանակից հանել նկարը, այլեւ վոխարենը տեղադրել ուրիշը՝ աշխատակիցների վկայությամբ, ցածրորակ մի դիմանկար:

Պատկերասրահի աշխատակիցներից տեղեկացանք նաեւ, որ գողացված նկարն արտասահմանում կարող է արժենալ մի քանի տասնյակ հազար դոլար:

Հիշեցնենք, որ նախկինում նույնպես պատկերասրահից նկարներ են գողացվել, որոնց մի մասը հետագայում ձեռնարկված միջոցառումների շնորհիվ վերադարձվել է:

Առայժմ հետաքննությունը շարունակվում է:

Ա. Բ.

Ելցին. «Ռուսաստանը պետք է լինի միասնական»

Ռուսաստանի նախագահ Բորիս Ելցինը հանդես եկավ Ռուսաստանի կազմում գտնվող հանրապետությունների իրավասությունների շրջանակի ընդլայնման օգտին, քան դա նախատեսվում է Դաշնության պայմանագրով: Հինգշաբթի օրը հանդիպելով այդ հանրապետությունների ղեկավարների հետ, նա նշեց, թե Ռուսաստանը պետք է լինի միասնական, թեկուզեւ, Ելցինի խոսքերով, *«այդ մասին այլ հատուկենք կարծիքներ կան»*: Նախագահն ասաց նաեւ, թե *«Մոսկվայում ոմանց սնոբիզմի արտահայտությունն էլ այն է, որ ուզում են հանրապետությունները ղեկավարել կենտրոնից, ինչն անթույլատրելի է»*:

Անթույլատրելի է նաեւ այն իրավիճակը, երբ հանրապետության ղեկավարները *«ստորացած բախում են մոսկովյան վարչությունների դռները»*: Ելցինը համաձայնեց, որ հանրապետությունների հետ նոր ընկերային հարաբերությունների ստեղծումը Ռուսաստանում այնքան էլ *«հեշտ չի ընթանում»*:

Խոսելով Ռուսաստանի եւ Թաթարստանի հարաբերությունների մասին, նախագահը նշեց, թե Մոսկվան Կազանի հետ հանգիստ երկխոսություն է վարում, որպեսզի ստորագրվեն համաձայնագրեր:

Ելցինը բարկացած է «Պամյատ»ի վրա

Ռուսաստանի նախագահ Բորիս Ելցինը բարկացած է հոկտեմբերի 13-ին «Մոսկովսկի կոմսոմոլեց» թերթի խմբագրության վրա «Պամյատ»ի կողմից լկտի հարձակման կազմակերպմամբ, հայտնեց նրա մամուլի քարտուղար Վյաչեսլավ Ռոստիկովը: Պատահարի կազմակերպմամբ Ելցինը հրամայել է անվտանգության եւ ներքին գործերի նախարարներ Վիկտոր Բարանիկովին եւ Վիկտոր Երինին շտապ կարգով զբաղվել պատահարի մանրամասները եւ օրենքին համապատասխան կիրառել խիստ միջոցներ:

Նախագահն իր աջակցությունն է հայտնել «Մոսկովսկի կոմսոմոլեց»ին եւ հայտարարել, թե ձեռք կառնի բոլոր անհրաժեշտ միջոցները Ռուսաստանի քաղաքացիների հիմնական իրավունքների, այդ թվում՝ խոսքի եւ մամուլի ազատության ապահովման համար:

Իսկ «Պամյատ»ը չի ընդունում իր մեղքը «Մոսկովսկի կոմսոմոլեց»ի հետ կապված դեպքի առնչությամբ եւ չի տեսնում ոչ մի հիմք քրեական գործ հարուցելու համար: «ԻՖ»ին տված հարցազրույցում «Պամյատ»ի նախագահ Դմիտրի Վասիլեւը հայտարարեց, որ եթե Ելցինը ՆԳՆ-ին եւ հանրապետության անվտանգության նախարարությանը հրամայում է պարզաբանել իսկությունը, ապա դա տարածվում է ոչ միայն «Պամյատ»ի, այլ նաեւ թերթի խմբագրության վրա, որը *«պաթոլոգիա եւ սեմտալ այլասերություն է քարոզում»*: ■

Տաջիկստանը հույսն ինքն իր վրա է դնում

Տաջիկստանը խաղաղապահ ուժեր մտցնելու կապակցությամբ Ադրբեջանի հրաժարումն ընդունեց «մեծ ափսոսանքով», «ԻՖ»ին հայտնեց Տաջիկստանի խորհրդարանի նախագահի տեղակալ Սայֆֆիդդին Տուրաեւը: Այժմ հանրապետությունը կփնտրի *«կրակը դադարեցնելու նոր ուղիներ եւ հույսը կդնի սեփական ուժերի վրա»*: Միաժամանակ Տուրաեւը հույս հայտնեց, թե ԱՊՀ խաղաղապահ ուժերը, ներառյալ Բելառուսի եւ Ղազախստանի ստորաբաժանումները, կմտցվեն Տաջիկստանի առճակատման գոտի: Տուրաեւն այնուամենայնիվ նշեց, որ հասկանում է, թե ինչ խնդիրների հետ է կապված խաղաղապահ կոնտինգենտի մուտքը: ■

Լուրերի Դուռ

Մանյակին գնդակահարություն

Ինչպես «ԻՖ»ին հայտնեցին Ռուսաստանի արդարադատության նախարարության լրատվական ծառայությունում, Ռոստովի մարզային դատարանը հինգշաբթի օրը պատժի առավելագույն չափի դատավճիռ է ներկայացրել բռնաբարող մանյակ, 50-ից ավելի կանանց եւ երեխաների մահվան մեղավոր Անդրեյ Չիկատիլոյին: Չիկատիլոյի դատավարությունն սկսվել էր ապրիլի 14-ին, Դոնի Ռոստովում եւ ընդհատումներով շարունակվում էր ուղիղ կես տարի: ■

ԱՄՆ պատվիրակը Վրաստանում

Հոկտեմբերի 15-ին ոչ պաշտոնական այցով Թբիլիսի ժամանեց ԱՄՆ-ի պետդեպարտամենտի պատվիրակությունը պետքարտուղարի օգնական Ռիչարդ Ռոջերի գլխավորությամբ: Նույն օրը ԱՄՆ-ի ներկայացուցիչներին ընդունեց Վրաստանի խորհրդարանի նախագահ Է. Շեւարդնաձեն: Ռոջերը հայտարարեց, թե ամերիկյան պատվիրակության, ինչպես նաեւ ԱՄՆ-ի դեսպանության այցելության նպատակը Վրաստանում ստեղծված իրադրության պարզաբանումն է: ■

Հատուկ հսկողություն

Հոկտեմբերի 15-ից Վրաստանի տարածքում գտնվող բոլոր կարեւոր էներգետիկական օբյեկտները կգտնվեն հատուկ հսկողության տակ: Ինչպես հայտնում է «Սնարֆ»ի թղթակիցը, Վրաստանի իշխանությունների որոշումը պայմանավորված է այդ օբյեկտների վրա շրջանում հաճախակի դարձած հարձակումներով: ■

«Ձեռնունայն» ձեռներեցներ

Հոկտեմբերի սկիզբը մինչեւ ցաս ձեռներեցների մտահոգություն պատճառեց. պետությունը պետական միահեծանություն է հայտարարել սպիրտային խմիչքների եւ ծխախոտի վաճառքի վրա: Նրանք ստիպված են ցուցափեղկերից վերացնել այդ ապրանքները, բացառությամբ, եթե դրանք գնված են արտասահմանում, չնայած դրա համար էլ համապատասխան փաստաթղթեր են պետք: ■

BUSINESS TO BUSINESS

«ՎԵՐՏԵՔՍ ՎԵՆՉԸՐՍ» ՍՊԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ

ԴՈՒՍՏՐ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆ

YERTHOW PAGES

ԴԵՂԻՆ ԷՋԵՐ

The only official Telephone Directory being jointly prepared by the Yerevan City Council and Vertex Ventures LTD, a New York Corporation.

The directory will contain the addresses and telephone numbers of all businesses registered in Yerevan together with various advertisements.

The directory will be published both in Armenian and in English and will be sold in Armenia and throughout the world.
Your advertisements will expand your business and will introduce it throughout various world markets.

If you desire to have your business known Internationally, then place your advertisements in the only official Yerevan telephone Directory, being prepared jointly by the Yerevan City Council and Vertex Ventures LTD, a New York Corporation.

Միակ պաշտոնական տեղեկագիրքը, որը համատեղ պատրաստվում են հրատարակելու Երեւանի քաղաքային խորհրդի գործադիր կոմիտեն եւ ամերիկյան «ՎԵՐՏԵՔՍ ՎԵՆՉԸՐՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը:

Տեղեկագրքում տեղ կգտնեն Երեւանի բոլոր ձեռնարկությունների հասցեները եւ հեռախոսահամարները, ինչպես նաեւ այլազան գովազդներ ձեռնարկությունների եւ նրանց գործունեության մասին:

Տեղեկագիրքը լույս կտեսնի հայերեն եւ անգլերեն լեզուներով, կվաճառվի Հայաստանում եւ ամբողջ աշխարհում:

Տեղեկագրքում տեղ գտած գովազդները հնարավորություն կընձեռեն գործարար մարդկանց եւ ձեռնարկություններին դուրս գալու միջազգային շուկա եւ ընդլայնելու գործարար կապերը:

Եթե դուք ցանկանում եք, որ Ձեր գործունեության մասին իմանան ամբողջ աշխարհում, ապա տեղավորեք Ձեր գովազդը տեղեկագրքում, որը միակ պաշտոնականն է եւ համատեղ պատրաստվում է Երեւանի քաղաքային խորհրդի գործադիր կոմիտեի եւ ամերիկյան «Վերտեքս վենչրս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից:

Apply at Vertex Ventures LTD,
Address: Tamanian st. 2, Yerevan-9
tel. 56-06-05, hours 9.00-17.00
55-27-52, hours 17.30-21.30

Դիմել ամերիկյան «Վերտեքս վենչրս» ՍՊԸ Հայաստանի դուստր ձեռնարկությանը:
Հասցեն Երեւան-9, Թամանյան-2
Հեռախոս 56-06-05 ժամը 9.00-ից - 17.00,
55-27-52 ժամը 17.30-ից - 21.30:

VERTEX VENTURES
ARMENIAN SUBSIDIARY LTD. CORPORATION • NEW YORK-YEREVAN

Միացյալ Նահանգների դեսպանատունը Երեւանում ցանկանում է վարձել 4-6 սենյականոց, լավ հարմարություններով սեփական տուն՝ մեծ խոհանոցով եւ ավտոտնակով:

Խնդրում ենք զանգահարել դեսպանատուն, ադմինիստրացիայի բաժին, հետեւյալ հեռախոսահամարով՝ 52-70-01:

Լուրերը՝ Interfax-ի «Սնարֆի», «Նոյան տապանի» եւ մեր թղթակիցների

Ազգ

Հիմնադիր եւ հրատարակիչ «Ազգ» թերթի հիմնադիր խորհուրդ

Գլխաւոր խմբագիր ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ

Խմբագիր ՀԱՄԼԵՏ ԳԱՍՊԱՐԵԱՆ

Տնօրէն ՍԱՐԳԻՍ ՍԱՐԳՍԵԱՆ

52.16.35 գլխ. խմբ.
58.18.41 խմբագիր
56.28.63 տնօրէն

Apple® Macintosh® համակարգչային շարուածը «Ազգ» թերթի

Azg Daily, 47 Hanrapetoutian st., Yerevan, Armenia, 375010 Editor H. AVEDIKIAN

ՀՀ նախարարների խորհրդին առընթեր «Պարբերական» հրատ. տպարան, Երեւան-23, Արշակունեաց 2

Գրանցման թիւ 65 Դասիչ 69149
Տպաքանակ 20 000 Պատուէր 1564
Ստորագրուած է տպագրութեան 15.10.1992

digitised by A.R.A.R.@